

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻԻՐՔԻՈՅ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ

Բ

Նախորդ յօդուածով տեսանք թէ թիւրք կառավարութիւնը նոյն խոկ տրամադիր դանուած պարագային չէ կրցած ո՛ր և է բարենորոգում մտցնել երկրին վարչութեանը մէջ: Լիբանանի կոտորածը ու անոր հետեւանքով ֆրանսական միջամտութիւնը անգամ մը եւս հաստատեցին թէ օսմանեան պետութեան քրիստոնեաներուն ազատութիւնը եւրոպական զէնքով միայն կարելի է ապահովել: Քառսուն տարի է Արեւելեան խնդիրը այս սկզբունքին համաձայն մաս մաս կը կարգադրուի: Հետեւինք այդ բարեշրջումին զանազան հանգրուաններուն:

* *

Կրետէի նախորդ շարժումներուն պատմութիւնը զանց ընելով նոր եղանակին բացումը կը թուագրենք 1866ի մեծ ապստամբութեան պայթումէն: Երկու տարուան կռիւէ ետքը, եւրոպական միջամտութիւնը օգնութեան չհասնելով, Կրետացիները պարտաւորուեցան համակերպիլ 1868 յունուար 10ի ֆերմանով իրենց արուած վարչական կազմակերպութեան, որուն գլխաւոր զիծերը հետեւեալներն էին. — Քաղաքական եւ զինուորական իշխանութիւններու անջատում, քաղաքականը՝ կուսակալի մը, զինուորականը՝ հրամանատարի մը յանձնուելով: Կուսակալին քով իսլամ եւ քրիստոնեայ մէյմէկ խորհրդական: Կղզիին սանճաքներու բաժանումը, կէսօւակէս իսլամ եւ քրիստոնեայ կառավարիչներով ու խորհրդականներով: Այս պաշտօնատարներուն անուանումը ուղղակի Սուլթանէն: Կուսակալին քով վարչական խորհուրդ մը՝ զրեթէ ամենքն ալ իսլամ պաշտօնատարներէ կազմուած, եւ երեք քրիստոնեայ ու երեք իսլամ պատգամատարներէ: Այս ոգով կազմուած սանճաքի վարչական խորհուրդներ: Նահանգային ժողով մը իսլամական մեծամասնութեամբ, թէև Կրետացիներու մէկ չորրորդը միայն իսլամ է:

Այս կազմակերպութիւնը արդէն չէր զոհացներ Կրետացիները. եւ սակայն կուսակալները ջանացին այս ան-

ձուկ ոգով ֆերմանը անգամ անգործադրելի ընել: Քրիստոնեաներն ալ արմատական կուսակցութիւն մը կազմեցին, աւելի հիմնական փոփոխութիւններ ձեռք բերելու նպատակաւ:

Պերլինի դաշնագրին 23րդ յօդուածը 1868ի ֆերմանին գործադրութիւնը պարտաւորիչ ըրաւ, քրիստոնեաներուն նպաստաւոր բարեփոխութիւններու պայմանաւ: Հիւպատոսներուն հսկողութեանը տակ 1878 հոկտեմբեր 12ին նոր համաձայնութիւն մը կայացաւ Հալբա, որ Գանէայի մօտերն է: Նոր կազմակերպութեան գլխաւոր կէտերն էին. — Պաշտօնավարութեան հինգ տարուան տնտեսութեամբ կառավարիչ մը քրիստոնեայ խորհրդականով. նահանգային ժողով մը ութսուն անդամէ, որոնց 49 քրիստոնեայ եւ 31ը իսլամ, տարին 40էն 60 օր գումարուելու ու սրուշումները կառավարական վաւերացումին ենթարկելու պարտականութեամբ:

Դուռը աշխատեցաւ այս համաձայնութիւնը գործնականացնելու ապարդիւն թողուլ. Կրետացիներն ալ անգազար զէնքի զիմեցին: Սուլթանը 1888ի ապստամբութիւնը պատրուակ մը համարեց Հալբայի պայմանագրութիւնը 1889 հոկտեմբեր 26ի ֆերմանով ջնջելու համար: Նոր կառավարիչ Մահմուտ Ճէլալէտտին փաշա Կրետէի քրիստոնեաներուն հասկցուց թէ զիջողութիւններու ատենը ա՛լ անցած է, օսմանեան կառավարութիւնը իր քաղաքական մտածութիւնները փոխած ըլլալով: Կրետացիները կատեցան, խռովութիւնները վերսկսան, կառավարութիւնը խժովութեան ու բարբարոսութեան զիմեց: Եւրոպա այս ամէնը հետզհետէ իմացաւ. 1894 յունիսին Կրետական ժողովը քրիստոնեայ կուսակալ եւ տուքերու զանձումի կանոնաւորութիւն ուղեց. Պետութիւնները այս պահանջումներուն ուժ տուին. Քարաթէոտորի փաշա 1895 մայիս 5ին Կրետէի կուսակալ անուանուեցաւ: Հանդարտութիւնը պիտի տիրէր եւ բարեյաջող թուականի մը բացումին յոյսը կար. սակայն Դուռը կ'ուզէր ետ առնել ինչ որ ճնշումի տակ տուած էր: Իսլամները զաղանապէս զրգուեցան, զինուորական հրամանատարը հակառակեցաւ կուսակալին, որուն այլ եւս չէին հնազանդեր ոստիկան-զինուորները: 1896 մարտ 8ին Քարաթէոտորի յաջորդեց թիւրքան փաշա. առաջին գործը եղաւ յետաձգել Կրետական ժողովին գումարումը:

Քաջալերուած այս ամէնէն, իսլամները յարձակեցան

քրիստոնեաներուն վրայ, եւ քաղաքային պատերազմը սկսաւ: Յունիս 4ին դեսպանները միջամտելով Հայէքայի պայմանագրութեան գործադրութիւնը եւ քրիստոնեայ կուսակալի մը անուանումը պահանջեցին: Պէրովիչ փաշա կոչուեցաւ կուսակալութեան: Դրան զրդուումը զինուորական հրամանատարը Պէրովիչի գէմ մեքենայեց, ու իսլամներն ալ բողոքեցին կատարուած գործողութիւններուն դէմ: Քրիստոնեաներն ալ անբաւական մնալով, Կրետէի Յունաստանի հետ միացումին զազաւարը սկսաւ ծառայել: Պետութիւնները 1896 օգոստոս 25ին յաջողեցան Դրան ընդունիլ տալ ոստիկանական վերակազմութեան եւ քաղաքական բարենորոգումի ծրագիր մը որմէ զոհ մնացին քրիստոնեաները: Սուլթանը մինչեւ 1897 յունուար 27 հազիւ թէ հաւանեցաւ գործադրութեանը: Անկէ ետքն ալ ձեռքի տակէ զրգոն տուաւ իսլամները որոնք զրաւեցին Գանտիա եւ Գանէա, ուր տակաւին վերագործած չէին փախտական ապստամբ քրիստոնեաները: Կացութիւնը օրէ օր ծանրացաւ, Հայաստանի տոամը քիչ մնաց որ Կրետէ ալ կրկնուէր. հելլենական հիւպատոսը հեռագրեց իր կառավարութեան թէ «Ո՛ր եւ է յոյս չի կայ, բոլոր քրիստոնեաները պիտի ջարդուին»: Գնդապետ Վասսո 97 փետրուար 13ին 3,000 հելլեն զօրքով Կրետէ մտաւ:

Այս ամէնուն հետեւանքը յայտնի է. թիւրքեւհելլեն պատերազմը, Յունաստանի պարտութիւնը, չորս պետութեան միջամտութեամբ Կրետէի ազատութիւնը, եւ Էսրկիոսի յաղթական մուտքը Կրետէ, իշխանութիւնը Եւրոպայէն աննելով:

Այսպէս ահա, 1868ին խոստացուած պարզ բարեկարգութիւններու գործադրութիւնը մերժելով թիւրք կառավարութիւնը 1878 ին աւելի ծանր պարտականութիւններու տակ մտաւ. անոնք ալ ուզեց եղծանել եւ 1896ին ծանրագոյններուն յանձնառութեանը հարկադրուեցաւ: Առանց խրատուելու սուլթանը աշխատեցաւ մէկ ձեռքով կորզել ինչ որ միւս ձեռքովը տուած էր. ուստի եւ Կրետէն ամբողջապէս կորսնցուց: Կրետէի նրեսուն տարուան տարեկարգութիւնը կը պատկերացնէ թիւրքիոյ բարեկարգութիւններուն պատմութիւնը:

* * *

Կրետէի խնդրին այս կարգադրութիւնէն շատ առաջ եւրոպական թիւրքիոյ ուրիշ նահանգներու բարեկարգութեան հարցը արդէն լուծուած էր: Հէրսէք-Պոսնիա 1875 ի ամառը ապստամբելով, եւրոպական հիւպատոսներու միջնորդութեամբը պահանջեց կրօնական ազատութիւն, տեղացիներէ կազմուած երկրապահ զօրք, տուրքերու զանձումի զրութեան փոփոխութիւն: Սուլթանական իրատէ մը հոկտեմբեր 2ին ամբողջ կայսրութեան համար ընդհանուր բարեկարգութեան գործադրութիւնը յայտարարեց. Հէրսէքցիները այս խոստումին հաւատք չընծացին. ապստամբութիւնը չզարգեցաւ: Վիեննայի, Պերլինի եւ Բեզպրուրկի գահլիճներուն համաձայնութեամբը Ալըստրիոյ արտաքին գործերու նախարար Անտրաշի կոմսը

1876 յունուար 30ին ծանուցադրով մը Հէրսէք-Պոսնիայի համար Դոնէն պահանջեց կարգ մը բարեկարգութիւններու անմիջական գործադրութիւնը: Երազրին զլիաւոր կէտերն էին. — Քրիստոնեաներու իրաւունքի իրական հաւասարութիւն իսլամներուն հետ. տասանորդներու վարձակալութեան շնջում. կէսուակէ քրիստոնեայէ եւ իսլամէ բաղկացած տեղական ժողով մը, իբր բարեկարգութիւններու գործադրութեանը հսկող վերին մարմին: Դուռը այս առաջարկութիւններուն վերջին մասը չընդունեց, իբրև սուլթանին վեհապետական իրաւունքներուն մէջ ստնձը գութիւն: Սակայն առաջին մասն ալ չգործադրեց:

Ապստամբութիւնը Հէրսէքէն Պոսնիա տարածուեցաւ. Ալպանիոյ իսլամներն ալ Գարատաղի ընթացէն վրդովուած ոտքի ելան. Պուլկարիա ապստամբեցաւ 76ի մայիսին: Երեք գահլիճները նոր միջամտութեան մը որոշումը տուին. յունուար 30ի ծանուցադրէն այլապէս սպասուելից յիշատակազիր մը գրուեցաւ Պերլինէն: Կը պահանջուէր՝ Պոսնիոյ եւ Հէրսէքի երեւելի քրիստոնեաներէն յանձնառու ժողովի մը կազմութիւնը. քրիստոնեաներուն զինակրութեան արտօնութիւն մինչեւ նախորդ տարուան բարեկարգութեան իրատէին կատարեալ գործադրութիւնը. այլ գործադրութեան վրայ հսկելու իրաւունք մեծ պետութիւններուն: Յիշատակազիրը կ'աւարտէր յայտարարութեամբ մը որ՝ եթէ երկու ամսուան մամանակամիջոցի մէջ աւրութիւնները չկարողանան իրենց առաջադրած նպատակին հասնիլ, կայսերական երեք արքունիքը աւելի գործնական միջոցներու դիմել պիտի հարկադրուին:

Թիւրքիոյ իսլամներուն ազգային կուսակցութիւնը գէշ ընդունելութիւն ըրաւ այս սպասուելիքներուն, եւ իբր պատասխան՝ 1876 մայիս 30ին Աղիզը գահընկէց ընելով Մուրատը սուլթան հռչակեց, երեք ամիս ետքն ալ՝ օգոստոս 31ին՝ Համիտը:

Այն պահուն երբ Սերպիա եւ Գարատաղ կը պատերազմէին թիւրքիոյ դէմ, Պուլկարիա ապստամբեցաւ: Դուռը հրաման խրկեց կուսակալ Շէֆքէթ փաշային ապստամբութիւնը ջախջախել առանց ուշ դնելու գործարելիք միջոցներուն: Ասիայէն Պաշը-Պօզուք եւ Չէրքէզ վահմակներ բերուելով նետուեցան Պուլկարներուն վրայ: Երկիրը անմիջապէս հուրի եւ արիւնի մատնուեցաւ. ահռելի վայրագութիւններու զրութիւն մը բարբարոսարար գործադրուեցաւ, 30,000 Պուլկար ջարդուեցան: Ապստամբութիւնը ամբողջապէս ջախջախուեցաւ. Շէֆքէթ փաշա, փառքերով ու պատիւներով ծանրաբեռն, Էրզրումի կուսակալ անուանուեցաւ:

Այս խժոժութիւնները սակայն յուզեցին Եւրոպան. Չարը գործելու պատրաստականութիւնը յայտնեց, նոյն իսկ եթէ միւս պետութիւնները անտարբեր մնային:

Թիւրքիոյ համար ճգնաժամը հասած էր: Եւրոպայի ընդհանուր համաձայնութիւնը բեկանելու նպատակաւ Դուռը մտաբերեց պետութիւններէն զօնէ ոմանց զոհացում տալ, եւ ահա Օսմանեան Սահմանադրութեան մը գաղափարը հրապարակ նետուեցաւ: Սահմանադրական

կայսրութեան մը մէջ զանազան նահանգներ առանձնա-
 շնորհումներով օժտելու պէտք չէր մնար: Դրան այս խոր-
 հուրը պետութիւններուն հաղորդուեցաւ 1876 հոկտեմ-
 բեր 12ին. առաջարկը անընդունելի էր Ռուսիոյ որ թիւր-
 քիոյ մէջ սահմանադրութեան նոյն իսկ կատակերգութիւնը
 անգամ վտանգաւոր կը համարէր իր ներքին գործերուն:
 Հոկտեմբեր 15ին Իկնաթիէի Պոլիս եկաւ ու 30ին վերջ-
 նագիր մը տալով՝ յաղթուած Սերպիոյ և Գարատաղի հա-
 մար 48 ժամուան մէջ զինադադար պահանջեց, եւ ինք-
 նավարութիւն՝ Հէրսէքի, Պոսնիոյ ու Պուլկարիոյ: Նոյեմ-
 բեր 2ին զինադադարը հրատարակուեցաւ:

Անգլիա յուզուեցաւ ուսական այս միջամտութիւնէն
 եւ 1876 զեկտեմբեր 11ին Պոլիս զեսպանախորհուրդ մը
 դուրսուեցաւ, յատկապէս եկած ներկայացուցիչներու եւ
 արդէն մայրաքաղաքը զանուող զեսպաններու միաբանու-
 թեամբ: Եւրոպական այս սլաշաճաւարութիւնը զեկտեմ-
 բեր 24ին հետեւեալ ծրագիրը վերջնապէս ընդունեց.

Ա. Հողային ընդարձակութիւն Սերպիոյ և Գարատա-
 ղի համար:

Բ. Ինքնավարութիւն Պոսնիոյ եւ Հէրսէքի, Պետու-
 թիւններուն համաձայնութեամբ սուլթանէն նշանակուած
 ու պաշտօնավարութեան հինգ տարուան տեւողութեամբ
 կառավարիչով մը:

Գ. Նմանօրինակ վարչութիւն հիւսիսային Պուլկարիոյ,
 եւ այդ նահանգին միւս մասերուն համար լուրջ բարեկար-
 գութիւններ:

Դ. Պեճիքական բանակով մը վերոյիշեալ նահանգ-
 ներուն զբաւումը, եւ միջազգային յանձնաժողովի մը
 վերհսկողութիւնը, մինչեւ այս ծրագրին ամբողջակի գոր-
 ծադրութիւնը:

Երբ զեկտեմբեր 24ին այս սրոշումները արուեցան,
 Դուռն ալ Օսմանեան Սահմանադրութիւնը հոչակեց: Այս
 գործադրութեամբ քաղաքական կացութիւնը մինչեւ աստի-
 ճան մը փոխուեցաւ ի նպաստ թիւրքիոյ: Դեսպանախոր-
 հուրը չափաւորեց իր պահանջումները: Երազրէն շնչեց
 Սերպիոյ և Գարատաղի համար հողային ո՛ր եւ է ընդար-
 ձակութիւն, ինչպէս նաեւ երեք նահանգներուն համար
 միջազգային յանձնաժողովի մը վերհսկողութեան սր-
 շումը:

Դուռն այս չափաւորուած ծրագիրն ալ չընդունեց.
 1877 յունուար 20ին 180 անգամէ բաղկացած օսման-
 եան ժողով մը դուրսուելով Պոլիս ընդհանուր հաւանու-
 թեամբ մերժուեցաւ Դեսպանախորհրդին ծրագիրը: Երկու
 օր ետքը մեկնեցան Եւրոպայէն եկած պատգամաւորները:
 Ռուսիա 1877 փետրուարին պատերազմ հրատարակեց
 թիւրքիոյ դէմ. 1878 մայիսին Սան-Սթէֆանոյի դաշ-
 նագիրը կնքուեցաւ. նոյն տարին ալ Պերլին վեհաժողով
 գումարուելով արեւելեան ինդրին մէկ մասն ալ լուծուե-
 յաւ:

Հէրսէքի համար 1875ին տարրական բարենորոգում-
 ները մերժելով, և 1876ին Պուլկարիան այրելով ու ջար-
 ցելով, թիւրք իշխանութիւնը կորսնցուց այդ նահանգները,

ուրիշ մեծամեծ զոհողութիւններով հանդերձ: Օսմանեան
 պետութիւնը ահեղապէս սկարացած դուրս կ'ելլէր բարե-
 նորոգումներու պահանջումին դէմ ցոյց տուած հակառա-
 կութենէն:

* * *

Հայկական ինդրին պատմութիւնը իր ամբողջութեա-
 նը մէջ շատ նմանութիւն ունի եւրոպական թիւրքիոյ բա-
 րեկարգութիւններու հարցին հետ:

Մեր ինդրին պաշտօնական ծագումը պէտք է 1870
 էն թուագրել: Դուռն զմիամակեցաւ խրիմեան պատրիար-
 քին օրովը պատրաստուած տարրական բարեկարգութիւն-
 ներու ծրագիրը ընդունել. քանի մը տարի ետքը Հայաս-
 տանի հարցը Արեւելեան ինդրին կարեւոր մէկ մասը կը
 կազմէր, մտնելով Եւրոպայի քաղաքականութեան օրա-
 կարգը՝ Սան-Սթէֆանոյի և Պերլինի դաշնագրերով: Սու-
 թանը սակայն իր միջազգային յանձնառութիւնները չու-
 ղեց յարգել, եւ ահա անգլիական նաւատորմը Իզմիրի
 առջեւ խարսխելով Կիպրոսի գաշնադրին ուժով թիւրքիոյ
 ասիական նահանգներուն համար սուլթանին պարտակա-
 նութեանց գործադրութիւնը պահանջեց: Սուլթանին « իր
 հոգածութիւնը իրական եւ փայլուն գործերով շուտով ե-
 րեւան բերելու» յայտարարութեան վրայ բրիտանական
 մարտանաւերը մեկնեցան Իզմիրէն: Տարի մը ետքը Կ.
 Պոլսոյ անգլիական զեսպան Սըր Հէնրի Լէյարտ պաշտօ-
 նական տեղեկագրի մը մէջ իր կառավարութեան կը յայ-
 տարարէր թէ խոստացուած բարեկարգութիւններէն եւ ոչ
 մէկը ուղղամտութեամբ գործադրուած է. ու կ'աւելցնէր.
 « Համոզուած եմ որ պատերազմին վերջնապէս ի վեր,
 մուսուլման կուսակցութիւնը յաջողած է համոզել նորին
 Մեծութիւնը (Սուլթանը) թէ եւրոպական կարգուարեքը
 թիւրքիա ներմուծելու համար իր նախորդներուն ձեռնարկ-
 ները յաջողութիւն գտած չըլլալով, ինքն ալ հիմա առ սնց
 Եւրոպայի գործելու է. իր երկիրը պէտք է լաւացնի, ու
 բարեկարգէ թիւրքական եւ իսլամական եղանակներով:»
 Անգլիական զեսպանը՝ իբր եզրակացութիւն՝ եւրոպական
 շատ կարուկ միջամտութեան մը անհրաժեշտ հարկը ըզ-
 գացնել կուտար:

Եւրոպական այդ միջամտութիւնը ժամանակ ժամա-
 նակ երեւան գալու նշաններ ցոյց տուաւ, բայց քաղաքա-
 կան արգելքները միշտ անպակաս գտնուեցան: Այդ մի-
 ջոցին Հայոց պատրիարքը Հայաստանի համար նախ Ա-
 րեւելեան Բուժկիի կազմակերպութիւնը պահանջեց երկ-
 թունուզցի խայրէտախն փաշա սատրապամ էր. յետոյ՝
 թէեւ Կրեաէի եւ Լիբանանի առանձնաշնորհումները բա-
 ւական համարեց, բայց անգլիական զեսպանը աւելի չա-
 փաւոր պահանջումներու յորդորականը կարգաց: Այդ
 չափաւորեալներն ալ սակայն Դրան անյաղթելի գծու-
 րութիւններուն բաղնեցան: Սուլթանը Քիւրտերու, Չըր-
 քէկներու, Բուժկիի մուհաճիւններու միջոցաւ եւ իր պաշ-
 տօնեաններուն աջակցութեամբ կը գործադրէր « թիւրքա-
 կան եւ մահմէտական եղանակներով երկիրը լաւացնելու

եւ բարեկարգելու ծրագիրը:» Ա՛լ հայ ժողովուրդը հան-
 դարս բանակցութիւններէն յուսահատ մտաբերեց զիմել
 այն միջոցներուն որոնց շնորհիւ եւրոպական միջամտու-
 թիւնը երեւան եկած էր եւրոպական թիւրքիոյ մէջ: Հայ
 ազգը իր այս նախազգացումին մէջ սխալած չէր: Հայկա-
 կան խնդիրը որ Գում-Գաբուի մէկ անկիւնը մարմին ա-
 ոած էր ուժգնապէս, եւրոպական մեծ խնդիրը եղաւ 1894-
 95ին: Եւ հիմա թէեւ լուսթիւնը կը տիրէ մեր շուրջը,
 բայց քիչ շատ ուշադիր եղողները կը նշմարեն որ թերևս
 շատ ալ հեռու չըլլայ այն օրը որ Հայաստանը Եւրոպայի
 քաղաքական մտածութիւններուն մէջ առաջին տեղը զրա-
 ւէ: Արեւելեան խնդրին պատմութեան ամբողջ ընթացքին
 մէջ կը տեսնուին նոյն երեւոյթները ինչ որ հայկականին
 մէջ: Եւրոպայի միջամտութիւնը ընդհանրապէս կը յապա-
 դի, վասն զի պետութիւնները տարբեր տարբեր կնճռոտ
 շահեր ունին, եւ պէտք է նախ անոնք համաձայնեցնել ի-
 րարու, ու միշտ ալ վերջը վերջը կը համաձայնեցնեն, երբ
 դժգոհ ըստանալով յարատեւն իրենց գանգատներուն,
 պահանջումներուն եւ ուղղութեանը մէջ:

Ակներեւ է թէ այս վերջին քսան տարուան մէջ Եւրո-
 պայի ուղեցոյցն է թիւրքիոյ նկատմամբ Կլաստիոնի այն
 յայտարարութիւնը որ 1880 յուլիս 22ին Խորհրդարանին
 մէջ ըրաւ, թիւրքիոյ հասցէին ուղղուած. «Որքան ալ
 փափաքող ըլլանք խոյս տալ այն կնճռոտութիւններէն որ
 ըրոնք պիտի ծագին թիւրք կայսրութեան ջնջումէն, բայց
 եւ այնպէս թիւրք կառավարութեան իր հպատակներուն
 նկատմամբ իր պարտականութիւններուն կատարումը մեզի
 համար երկրորդական խնդիր մը չէ. առաջնակարգ խնդիր
 է. զլիսաւոր կէտ նպատակին է դէպի ուր կը ձգտին մեր
 ջանքերը. եթէ թիւրքիա յանձն չառնէ իր պարտականու-
 թիւնները կատարել, թո՛ղ իր հողային ամբողջութիւնը եւ
 անկախութիւնը փրկէ ինչպէս որ կրնայ:»

Հայկակ ան խնդրին, Մակեդոնիոյ խնդրին ստացած
 մեծ կարեւորութիւնը ցոյց կուտան այդ պարտականու-
 թիւններու անգործադրութեան հետեւանքները, ու մանա-
 ւանդ կրեւտի ազատութիւնը էն զօրեղ ապացոյցն է Անգ-
 լիոյ հանգուցեալ նախարարապետին սպանալիքին:

Եւ սակայն օսմանեան կառավարութիւնը կրնա՞յ «իր
 հպատակներուն հանդէպ իր պարտականութիւնները» կա-
 տարել: Թիւրքիա կրնա՞յ ինքնիրենը եւրոպական բարե-
 կարգութեամբ ու քաղաքակրթութեամբ օժտուիլ, հրաժա-
 րելով թիւրքական եւ իսլամական եղանակներէ: Այս հար-
 ցումին քննութիւնն ալ երբորդ յօգուածի մը կը վերապա-
 հենք:

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

ԱԼԵԿՍԱՆԴՐՈՒ, 31 դեկտեմբեր 98

Հիշանդանոցիկ շուրջը. — Հայր եւ որդի. — Ապա-
 սերեալները. — Վերջացող տարին. — Ուրիշ կաղնիներ.
 — Երբ:

Երբ Ղազէզ Արթին ամիրան՝ սիրտը զթառառ կա-
 րեկցութեամբ լեցուն՝ Ազգային Հիւանդանոցը հիմնեց,
 հողին վայրկեան մը տխուր նախազգացումներով սրտմե-
 ցաւ արդեօք: Մտաբերեց թէ Փրկչին հաւատարմարժ ա-
 նունը որ այդ մարդասիրական հաստատութեան վրայ կը
 շողար իբր յոյսի ծպտուն հրաւիրակը, օրին մէկը զողջա-
 հար պիտի թողուր հիւանդը որուն կ'ըսեն՝ «Քեզի Փրկիչ
 պիտի տանինք»: Անիկա գիտէ թէ «Փրկիչն ներս մտնու-
 զը ա՛լ անկէ ողջ դուրս չելար»: Առանց գրագէտ ըլլալու,
 Ազգային Տան ճակատը քանդակուած կը զգայ՝

Ամեն յոյս բողբ'ք ներս մտնողներդ:

Եթէ յոյսով մը ներս մտան՝ ամէն յոյս թողած դուրս
 ելան Հիւանդանոցէն Պատրիարք ու Հոգաբարձութիւն
 որոնք միտքը ինկեր է վերջերս, չեմ գիտեր ինչ յան-
 կարծական խղճահարութեամբ, ճար մը գտնել այդ Մե-
 ռեւատան մէջ զուր ու զապար չունեցող ջարդին: Կ'եւլին
 Եւտի-Գուլէ կ'երթան, կը քննեն կը զննեն, կը չափեն կը
 չափչփեն, եւ նորակառոյց շէնքը ա՛ եւ է փոփոխութիւն
 կրելու կատարելապէս անյարմար գտնելով կը մեկնին:
 «Ու ջլախտաւորները կը թողուին ուր որ են, այն կամար-
 «ներուն տակ որ թոքախտի ծաւալման բոյն մը դարձած
 «է, ինչպէս յայտարարելու անկեղծութիւնը ունեցաւ Հո-
 «գաբարձութիւնը:» Աս սողերը, Արեւելքէն առնուած,
 իրենց բոլոր պարզութեամբ սարսուռ կ'ազգեն:

Թոքախտի առ բոյնը ազգին պարզեւելու համար էր
 որ 30,000 ոսկի հաւաքուեցաւ: Աստուածաբախ մէկ-
 երկու վաճառական հոգիներնուն փրկութիւնը ապահովե-
 լու վստահելի երաշխաւորութիւնը՝ ազգային հանգանակու-
 թեամբ Հիւանդանոցին վերաշինութեանը մէջ փնտռեցին:
 Քանի մը ականաւոր բժիշկներ, ինչպէս Սերվիլէն, Խո-
 բասանճի, Փէշտիմալճի, փափաքեցան որ, կառուցուելիք
 շէնքին յատակագիծը պատրաստելու աշխատութեան ի-
 րենք ալ մասնակցելով, ճարտարապետութիւնը յանձնուի
 Պ. Քամբանաքիի, որուն մասնապիտակական կարողութիւնը
 փորձով հաստատուած էր: Օրին մէկն ալ Հոգաբարձու-
 թեան ատենապետը «հետը իշուն մէկը առած» — Սեր-
 վիլէնի բառերով — կ'երթայ ծերունի բժշկին յայտարարել
 թէ հիւանդանոցը անոր շինել պիտի տայ: Ինչ կրնային
 ընել հայ բժիշկները: Ազգին զրամական վստահութիւնը
 վայելողները այդ «պատուական» վաճառականներն էին:
 Ու բարձրացաւ շէնք մը ուր առողջ մանուկն ալ կը հիւան-
 դանայ:

Եւ սակայն այդ չարագործութիւնը երբ դատապար-
տել ուզենք, կը տկարանանք, վաճառական ճարտարապետ-
ները իրենց ոճիրին համար մեղադրելու վարանում մը
զգալով: Անոնք գուցէ տոհմային հիւանդութենէ վարակ-
ուած անպատասխանատուներ ըլլան: Ամենագէտի հիւան-
դութիւնը Հայոց հիմակուան համաճարակն է, ու այդ վա-
ճառականներն ալ շրջապատուած էին ցեղային ախտէն
բռնուելու վտանգաւոր պայմաններէն՝ — հարստութիւն եւ
տղիտութիւն: Ճարտարապետական տաղանդն ալ իրենց
աստուածատուր ձիրքերէն մէկը համարեցին, առանց սա-
րակուանքի: Ինչ ըսել այս անկեղծիկ միամտութեան:
Անկեղծութիւնը յատկութիւններու գեղեցկագոյնը կը
հոչակուի, — մանաւանդ երբ դէպի ապուշութեան սահ-
մանազուրկները ոտնձգութեան ելլէ: Եւ յետոյ, յաւակ-
նստութեան միջբողին նպաստաւոր ընդունարանը աղքատ
միտքն է. ու աղքատութիւնն ալ Աստուծմէ է, կ'ըսեն
— գոնէ մտաւորականը, ուստի եւ ներելի մեղք:

Այդ մտաւոր աղքատութեան կարճատեսութեամբն էր
որ այդ միեւնոյն հոգաբարձուները չկրցին ըմբռնել թէ ի-
րենց ինամակալութեանը յանձնուած հիմնարկութիւնը
կատարելութեան մտատիպարը չէր ներկայացնէր, ուստի
եւ ըմբոստացան բարեկարգութեան ո՛ր եւ է առաջարկի
դէմ, նոյն իսկ երբ Պոլսոյ հայ բժշկական դասը հաստա-
տեց թէ արդարեւ Հիւանդանոցը սպանդանոց մըն է: Լա-
ւագոյն համարեցին առնել քաղն քան թէ իրենց վեհա-
պետական իրաւունքներուն միջամտութիւն ընդունիլ:

Հոգաբարձուի փոփոխութիւնը սկզբունքի եւ գրու-
թեան փոփոխութիւնը շնչանակեց. տարբեր մարդիկ եկան
որոնք նոյն մտաւոր աղքատներն էին: Բայց օրին մէկը
Սերվիչէնի, Խորասանճիի եւ Փէշտիմալճիի պահանջումով
Պատրիարքարանը հարկադրուեցաւ Հիւանդանոցին մա-
տակարարութիւնը բարուրելու աշխատիլ: Այս մարդասի-
րական պարտականութիւնը կատարելու համար պէտք էր
անոր դէմ ելլող քննադատութիւնը, նոր Հոգաբարձութիւնը,
տապալելու: Քաղաքական ժողովը Հայրենիքէն, որուն բե-
րանը կարկեցնել տուած էր Դրան միջոցաւ, խնդրեց
վերսկսիլ իր պայքարը, խօսք տալով գանդաւո շայտնել
տպագրական տեսչութեան: Հայրենիք ընդհատել ստիպ-
ուած մարտը շարունակեց. ու այդ խոստմնատու Պատրի-
արքարանը անոր լուսութիւնը կամ պատիժը պահանջեց
Դոնէն:

Քաղաքական ժողովին փոփոխամտութեան շարժառի-
թը իմանալ փափաքող հետաքրքիրներուն չեմ պատաս-
խաներ «Փնտոնեցէ կինը». բայց մի՛ փնտուէքն ալ չեմ
յանձնարարեր: Վերաբոյժ մը որ աւելի խոցոտեալ քըն-
քուշ որտեք աղէկցնելու մասնագէտն է քան թէ վերաւոր
մարմիններ, իր պաշտօնին մէջ կը վտանգուէր Հիւանդա-
նոցին բարեկարգութեան ծրագրովը: Անհարկի չգտնուե-
լու համար մանրամասնութիւններու վրայէն անցնիմ: Ա-
մուսին մը ծովային նախարարին միջնորդութիւնը խնդրեց
Հոգաբարձութիւնը պաշտօնին վրայ պահելու համար:
Հասան փաշա Քաղաքական ժողովին ասենապետին հետ

զործեր սնէր, ու նաեւ Օրթագեղ անոր գրացին ալ ըլ-
լալով այցելութիւնը յաճախ կ'ընդունէր. գիշեր մը կ'ըսէ.

— Սիմոն պէյ, լրագիր մը ունիք եղբր որ ձեր հի-
ւանդանոցը կարծանել կ'ուզէ եղբր. ընտո՞ր թող կուտաս:

Սիմոն պէյ կռահեց թէ հարուածը որմէն կուգար:

— Գլխուս վրայ, Էֆէնտիմ, կը պատասխանէ:

Միւս առաւուն երթաք բարոյ՛ Հիւանդանոցի բարե-
կարգութիւն, Հայրենիքի պայքար:

* * *

Փաշայի մը կէս-բերան հրաւերին վրայ պարտակա-
նութեան այս շուտափոյթ մտաքուցումը, խղճի այս սպանու-
թիւնը ցոյց չի տար կառավարական շրջանակներու հետ
յարաբերութիւն ունեցող Հայոց նկարագրին ստորնացումը:
Հօրէն զաւակը զգալի տարբերութիւն կայ: Հիները, որոնք
բարոյականի կողմէ շատ յանձնարարելի օրինակներ չեն
եղած միշտ, բայց եւ այնպէս ժամանակին Հասան փա-
շաներուն առջեւ չափազանց խնայարհելէ կը խրաչէին:
Յեղային արժանապատուութեան զգացումը չէր մեռած
սրտերնուն մէջ: Սիմոն պէյին հայրը Մագսուտ ամիրա
օր մը զօրաւոր փաշայի մը դէմ ծանրիկէկ խօսելու ատեն,
ներկայ գտնուող Հայէ մը կամացուկ մը իրեն տրուած
խոհեմութեան եւ զգուշաւորութեան յորդորին կը պատաս-
խանէ. «Ես ինչո՞ւ աս ստակը զիշեր իմ՝ ուր ուզածս ա-
ստնց տ'ընի՛մ:» Իսկ իր զաւակը կ'ըսէ. «Ես ինչո՞ւ աս
ստակը զիշեր եմ՝ որ աստնց առջեւը պիտի պապանձիմ:»

— Մենք ինչո՞ւ աս պէյ, փաշա փաղտնները եւ ա-
կանակուա շքանշանները զիշեր ենք որ պիտի լռենք,
կ'ըսեն որիշ ամիրաներու թոռներ ալ, Պատրիարքարանի
հիմակուան վարիչներ: — «Ես ինչո՞ւ աս Օսմանիէն
կուրճէս կախեր եմ՝ որ պիտի լռեմ» կ'ըսէ Հայոց պատ-
րիարքը. ամենքն ալ ապաստեալ զաւակներ ու յաջորդ-
ներ անոնց որոնք իրենց ազգին ու եկեղեցիին իրաւունք-
ներուն պաշտպանութեանը համար հոգի կուտային, դեռ
երկու տարի առաջ իսկ: Հիւս Պատրիարքարանին սրա-
հը կը նմանի վանքի սեղանատան մը որուն գրակալ-ամ-
պիտնէն կախուած պատուիրանագիր մը կ'ազգարարէ «Աստ
լուսութիւն է պահելի եւ Սուրբ Գրոց ուշ գնելի:» Միայն թէ
Պատրիարքարանի պատուիրանագրին երկրորդ մասը պըզ-
տիկ փոփոխութեան մը ենթարկուած է. «Աստ լուսութիւն է
պահելի եւ Երլարզի ձայնին ուշ գնելի:» Ու ատ ձայնին
միայն ուշազիր՝ կը ճաշեն Հայաստանի մարտիրոսութեան
մեռելահացը: Պիտի մարսեն:

* * *

Տարին ալ մեզի համար խոր լուսութեան մէջ կը վեր-
ջանայ: Լուսութիւն մը ապագայի բարեգուշակ թերեւս:
Բայց գացող տարին տրամութեան թէ ուրախութեան տա-
րի մը ըլլայ, ինչ որ կ'երթայ ու ալ պիտի չվերադառնայ՝
իր ետին կը ձգէ վերջալոյս մը որ սիրտը կը յուզէ ու
միտքը երազկոտ կը թողու:

Վենետիկի Մենաստանին կրօնաւորները ամէն օր կը կատարեն պարտականութիւն մը որուն համար կը հաւատամ թէ անուշ յուզումով մը սրտերնին կը լեցնէ: Ամէն օր իրիկնադէմին հանդարտ հանդարտ զարնող զանգակ մը մենակեացիները մտածականի կը հրաւիրէ: Խաչելութեան պատկերին առջեւ աղօթարանի մը վրայ ծնրապիւր, երեսնին ձեռքովն ծածկած, ժամուն խորհրդաւոր կիսասուռներին մէջ խորասուզեալ, վերջացող օրուան կեանքերնուն վրայ կը մտտան: Կը զգամ թէ երբ կը սթափին սրտերնին ա՛լ աւելի թեթեւացած է: Քանի մը վայրկեան անխող արտածութեամբ համակեցան: Հոգեկան ատ հաճոյքը շուտ շուտ վայելելու բաղաւորութիւնէն զրկուած ենք մենք: Կեանքը կը վարէ, կը մղէ, կը տանի մեզի հեւ ի հեւ. աւտեն չի ձգեր մտածականի, երազանքի գորովալի օրօրներով մրափելու: Իրիկուն մըն ալ սակայն մէկէն ի մէկ կը ցնցուինք. տարի մըն ալ լմնցեր է: Խաղաղասէր կրօնաւորներուն համար մեռնող օր կայ, մեզի համար՝ մեռնող տարի: Տարիի մը մարմրող ատ վերջին արեւը մեր սրտերը թերեւս աւելի խտացեալ արտածութեամբ մը կը համակէ:

Լմնցող տարուան աս ետքի ժամերուն, գիշերուան մինաւորութեան մէջ քանինքր ենք, իրարմէ հեռու հեռու, որ մեր մտածականը կ'ընենք: Պալլացող ճրագով մը զրասեղանիս առջեւ միս մինակ, կը զգամ թէ ո՛րչափ շիտակ է ըսեր իտալացի բանաստեղծը թէ թշուառութեան մէջ է՛ն մեծ վիշտը երջանկութեան օրերու յիշատակն է: Արդեօք կայ զգացող Հայ մը որուն սիրտը աս չորս տարի է ամէն կաղընդի իրիկուն ատ երջանկութեան օրուան մը յիշատակէն չարիւնոտի: Ան ի՛նչ կաղընդի իրիկուն մըն էր 1894ի վերջին գիշերը. խանդավառութեան վառ վառը կը վառը ամէնու սիրտը. ժամանակակից հայ մարտիրոսութեան Յայրմաւորքին մէջ ազգային է՛ն անարատ ուրախութեան կաղընդի իրիկունը: Եւրոպա մեր զօրավիզը, Իզմիրլեան՝ պատրիարք, սուլթանը՝ զողողահար: Ու վաղը, 1895ին առսուն, ազատութեան կեանք տուող արեւը պիտի ծագէր հայ աշխարհին վրայ: Ու մէյ մըն ալ եկաւ 1895ի կաղընդին իրիկունը. ժամանակին տղաքն այ պիտի չմտնան ատ իրիկունը. «Ա՛ն կաղընդին որ պըտուող չկերանք» կ'ըսեն: Պոլիս մեր պտրաիկներուն բերնէն պտուղը կտրեցինք ան տարին. որքեր կային, անոնց վրան-պուխը ծածկելու էր:

Տարուան մը մէջ արիւնոտ արեւ մը շտաղունած էր երկինքը ուրկէ կենդանութեան ծիծաղկոտ լոյսը պիտի ցաթլը: Հայ աշխարհը ոսկորներու անհուն Մահաստան մըն էր. ահա չորս տարուան պատմութիւնը:

Սակայն Յոյսը արթուն կը հսկէ այդ ոսկորներուն վրայ ու լսել կուտայ Ազատութեան Եհովայի մը ձայնը որ կ'ըսէ. «Ո՛վ չորցած ոսկորներ, ես ձեր մէջը հողի պիտի դնեմ, «ու պիտի կենդանանաք: Ահա ես ձեր գերեզմանները «պիտի բանամ, ու ձեր գերեզմաններէն ձեզի պիտի հաւանեմ» ո՛վ իմ ժողովուրդս: Եւ իմ հողիս ձեր ներսի գին «պիտի դնեմ, ու պիտի կենդանանաք, ու ձեր երկրին

«մէջ ձեզի պիտի հանգստացնեմ:»

Ատ Եհովան չէր որ բացու Յունաստանի, Լիւանանի, Պուլկարիոյ ոսկորներու գերեզմանները, ու կենդանութեան իր հողին զրաւ անոնց մէջ: Ու պեռ երկէ ալ Կրեաէ իր ոսկորներէն յարութիւն չառաւ:

Մեր ոսկորները երբ: — Պատասխանը լսենք Կրեաէն:

Հասան փաշա 1822ին Մելիտանիի մօտ քարայրի մը մէջ փակեց հազար Կրեաացի, անոնց վրայէն ամուր մը ծեփեց ելքի ամէն գուռ ու ծակ եւ քարայրը զինուորներով պաշարեց: Այդ նահատակներուն ոսկորները բացօթեայ դամբարանի մը մէջ իրարու վրայ զիգուած անթաղ կը մնան մինչեւ այսօր: Գեղին տերտերը կ'ըսէ. «Աս ոսկորները վերջնապէս պիտի թաղենք երբ վերջին թիւրքը մեկնի ասկէ: Մինչեւ ան ատեն ամէն տարի մարտիրոսութեան տարեգարծին կուգանք ատ ոսկորները տեսնել, շրջըրջել անոնք, ու գանկերը կը դնենք մեր տղսը զուխը որպէս զի երիտասարդները երբեք չմոռնան թէ իրենց հայրերը ի՛նչ ըրած են իրենց համար:» Մելիտանիի զեղացիները ա՛լ հիմա իրենց ոսկորները կրնան թաղել:

Ու այդ վերջնական թաղումը կատարելու համար Կրեաացիները եօթանասուն եւ վեց տարի կամքի, խելքի, յարատեւութեան առաքինութիւնը ունեցան:

«Ե՛րբ»ին պատասխանը մենք ալ ատ առաքինութիւններէն սպասենք:

ՀՐԱԶԴԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՋԵՒ

ՀՐՈՍԱԿԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՆ

2

Մաշաբի քարը. — Վերադարձ գեղը. — Մատենոյ եւ մատենոտը. — Կառավարական խոշորակոշիռներ. — Դեպի լեռը:

Հայածուած հինգ հրօտակները Մաշաթի քարը ապուհով կը մնային. բայց յոգնած ու անօթի կը սպասէին Ղարա Մկրին, որ չեկաւ. գիշերը միայն կրցին երթալ ուրոշուած տեղէն ստանալ անոր ձգած նամակը: Ղարա Մկրը կ'իմացնէր իրենց պակասած ընկերոջ՝ Գարեգինի՝ ձերբակալումը: Կուռի պահուն խեղճին հրացանը աւրուեր է. երբ զինուորները վրան յարձակեր են, ասան մը պարագ զէնքովը զիմաղրելէ յետոյ բռնուեր է: Զօրքերը բռնած գերիւնին յաղթանակաւ Արմուտան տարեր են ու հոնկէ կառավարութեան կեդրոնավայրը: Արմուտան զօրքերը ծանուցեր են թէ միւսները ամենքն ալ սպաննուած են:

Աս նամակը մեծ տխրութիւն պատճառեց իրենց.

բայց ա՛լ եղածը եղած էր. հիմա պէտք էր ինքզինքնին մտածէին, մանաւանդ որ Պատուելին ոտքը կոտրած ըլլալով չէր կրնար ընկերներուն հետ լեռնէ լեռ անցնիլ, կուսիլ. անոնց բեռ մը միայն պիտի բլլար: Որոշեցին գեղ իջնել, պատուելին հոն պահել ու իրենք հեռանալ: Որոշումին գործադրելու համար ձախուժիւնը սենցան: Ճամբայ ելան. կամաց կամաց հասան գաշար. ցորենները քաղաւած չէին, որով շատ յարմար էր անոնց մէջէն քաշել: Մինչեւ գեղին պարտէզները գացին եւ հասան Պէյլերեանի տանը առջև. Պատուելին ու Պէյլերեան յառաջացան, տեսան որ տունը լոյս կը վառէր, ու մանր քարեր նետեցին պատուհանին որ բացուեցաւ. կին մը նուազկատ ձայնով «Աս ո՞վ է» հարցոյց. զարմացած մնաց երբ ասոնց ձայնը լսեց: Երբ լաց դրած կուլային իրենց Վահանը որուն զիակը միւս օրը բերելու կը սպասէին, ինչպէս զինուորները բռած էին: Դիւրին է երեսակայել յանկարծ տիրող ուրախութիւնը: Ամենքը ներս մտան, հանգչեցան, լաւ ճաշ մը ըրին, յետոյ պատուելին հոն թողուցին, մինչեւ որ աղէկնայ, ու իրենք Պէյլերեանի մշակին առաջնորդութեամբը գացին Թուրուտի լեռը ապահով տեղ մը:

Այդ տան մէջ Պատուելին ապահով չէր. տեղ մը լուր խրկեց, բայց չուզեցին ընդունիլ. մտածեց որ ուրիշներն ալ մերժողական պատասխան կրնան տալ վախերնուն. ան ատեն տարօրինակ դաղափար մը ունեցաւ: Կանչել տուաւ զիրենք մատնող Հաճի աղաներէն մէկը:

Մատնուողին ու մատնիչին այս ինքնայօժտար տեսակցութիւնը բառ առ բառ կ'ընդօրինակեմ: Մեր Հայաստանցիներուն կնճռոտ հոգեբանութիւնը ուսումնասիրելու հետամտողները կրնան օգտուիլ:

Հաճի աղան ներս կը մտնէ. լալով ու խնդալով կը պահէ Պատուելին ճակատը ըսելով.

— Ես ամէնէն շատ քննէ կը վախէի, բայց բոլորն ալ քու վրայ կը խօսին, ամէնէն շատ զիմազրեց ըսելով: Փա՛նք Աստուծուն որ ողջ տեսայ զքեզ: Հապա Վահան պէյը ո՞ւր է:

- Ան հոս չի կայ, լեռն է:
- Ախ, ան ալ տեսնել կը ցանկայի:
- Ինչ որ է, կը բաւէ որ կը փափաքիս, օր մը կը տեսնես, ըսին միւս գտնուողները: Դուն հիմա ան ըսէ, ինչ ընելու է. ոտքը այսպէս կարող չէ տեղ մը երթալ:
- Այդ հոգ չէ, պատասխանեց Հաճի աղան. ես կը պահեմ եւ ողջ առողջ Վահան պէյին կը յանձնեմ երբ որ ուզէ. դուք այսպէս լուր խրկեցէք:

Հաճի աղան մեկնեցաւ ցնաց տեղ պատրաստելու:

— Արգարեւ, ըսաւ պատուելին, մատնիչ մըն է, բայց այս վիճակիս մէջ անկէ զատ ոչ մէկը կրնայ վստահիլ զիս պահելու: Չի կրնար յանձնել ալ, վասն զի ընկերներս լեռն են, կը վախէ որ տունով տեղով զինքը բնաջինջ կ'ընեն:

Հաճի աղան վերադարձաւ ու «հրամայեցէք» ըսելով Պատուելին ձեռքէն բանեց եւ իր տունը ծածուկ տեղ մը

պահուցնելով լաւ պատուասիրեց:

Օրին մէկը Պատուելին ուզեց իր անձնական առկախ հաշիւները կարգադրել: Տալիք ունէր, առնելիք ունէր, ամէն բան երեսի վրայ էր, ուստի փափաքեցաւ հաշիւ մը շինել աւելի հին թուականով ու կնոջը յանձնել: Կանչեց կիներ, աս խեղճը եկաւ, պատիկ աղջիկն ալ մէկտեղ: Տեսակցութիւնը սրտածմլիկ եղաւ. բոլոր տնեցիներն ալ ներկայ էին: Աղջիկը որ շատ կը սիրէր հայրը եւ «եղբայր» կը կանչէր զանի, էն առաջ չմտեցաւ հօրը, մինչգեռ ամէն օր եկեղեցի եւ դպրոց երթալով «եղբայր» կը փնտռէր. կամաց կամաց երբ ձայնէն ճանչցաւ, յանկարծ գերկը նետուեցաւ «եղբայրս է» գոչելով. «գտայ, ա՛լ չեմ թողուր որ երթայ»:

Հաշիւները տեսնելով մեկնելու կը պատրաստուէին. ո՞վ կրնար վստահիլ թէ այդ առաջին եւ վերջին բաժանումը պիտի չըլլար: Կուլար կիներ, կուլային տնեցիները այնպէս ինչպէս երբ մէկը իր սիրելին գերեզման կը գնէ. Կուլար նաեւ պզտիկ Ազնիւր, պինդ մը փաթթուած հօրը վզին: Պատուելին երեսունք ուրախ էր, բայց իր սիրտը բանալու էր տեսնելու համար թէ ի՞նչ կը զգար: Հաճի աղան ալ աս պահուն ինքզինքը շիրնալով բռնել ըսաւ.

— Ախ, ես քեզի ի՞նչ ըսեմ որ ասոնք թշուառացուցիք, ընկերներուդ հետեւելով: Ասոնք, ցուցնելով կիներ ու զաւակը, փոխեցիր անոնց, եւ հիմա ո՞վ ունիս որ պաշտպանէ ասոնք:

— Այո՛, ըսաւ Պատուելին, ես փոխեցի՝ պարտականութիւնս կատարելու համար, որ գիտցողներուն բոլորին ալ պարտքն է, եւ նուիրական պարտք, բարձր քան զկին եւ զաւակ: Այո՛, միլիոնաւոր կիներու եւ զաւակներու գործը մոռցնել կուտայ իրենը: Ես այսպէս հետեւեցայ իմ խղճիս, առանց անսալու ուրիշներու խօսքին, իսկ դուն եւ շատերը ազատ էք հետեւելու ձեր խղճի կայծին:

Աղջիկը զեռ կուլար՝ «Ե՛ղբայր, եկու տուն երթանք» ըսելով. բայց անսացող չեղաւ. խեղճ պզտիկը լալէն քաշելով տարին: Պատուելին ալ մինակ մնաց իր թաքստոցը:



Կոտի մէջ բռնուած Գարեգինը երբ կառավարական կեդրոնը տարին նոյն ատեն նաեւ Երեզա, Ակը, Տիլրիկ հեռագրուեցաւ սրպէս զի ճամբաները բռնեն, լեռները շրջուն ոստիկան զինուոր հանելով, ու անոնցմէ մաս մըն ալ իրենց օգնութեան խրկեն: Հեռագրին մէջ ապտամբներուն թիւը 36ի հաներ էին, սրպէս զի արժանապատուութիւննին չվիրաւորուի. ապա թէ ոչ իրենց երեսին պիտի տրուէր ապիկարութիւննին սրով չէին կրցած վեց հոգի բռնել կամ զարնել:

Ղաթին, գայմագամը, Ակնէն ձիւտը գօրք եկան Արմուտան մտան. գիշերը արդէն զեղը հսկողութեան ներքեւ էր. առտուն շղթայի մէջ առին, եւ հրաման տրուեցաւ որ ոչ ոք դուրս ելլէ: Կասկածելի մարդիկը քննեցին եւ արդիւնք մը առաջ չգալով սկսան Պէյլերեանի տան բոլոր

անպատեհները վախճանել: Մշակները սիններու կապելով կը ծեծվին որպէս զի հրոսակներուն տեղը որ իրենք զիտնալու էին ըսին: Տանը երախտները առջեւին ձգած, մերկ թուրերը անոնց վրայ կը շողացնէին՝ տեղեկութիւն պահանջելով: Յետոյ՝ Պէյլերեանի կինը զատեցին. «Պիտի տանինք մինչեւ որ Լրիլը գոյ յանձնուի» ըսին: Կեսուրը չզիմանալով աս բանին 120 ոսկի կաշառք տուաւ և հարսը ազատեց:

Պէյլերեանին տունը կին մը կար. վերուցին տարին տերտերին տունը բանտարկեցին. շատ սպանալիքներ ըրին որ հրոսակներուն տեղը իմացնէ: Ան ալ ժամանակ խնդրեց որպէս զի երթայ իմանայ. «Մայրը զիտնալու է, երթամ անկէ թերեւս հասկնամ» ըսաւ: Թող տունն. շիտակ գնաց Հանի աղային տունը ուր զիտէր թէ Պատուելին մարագին մէջն է: Գտաւ անիկա, եւ անոր ըսաւ.

— Աս ինչ ցաւերու մէջ է մեզի թողիք. չեղած սպանալիքները կ'ընեն ասոնք մեզի, տեղերնին ըսէք ընելով. ա՛լ ճարերնիս հատաւ, ըսելու ենք:

— Քայրոս, պատասխանեց Պատուելին, այսօր է ինչ որ կը սպանան անկէ եւ կ'անցնի. իսկ դուք եթէ թոյլ զոտնուելով մեր եւ մեր ընկերներուն տեղը ըսէք, կը բռնեն մեզի կը կախն, եւ յաւիտեան չլք մոռնար որ մեզի կախելու պատճառ եղաց: Կամ թէ պիտի գան, մենք ալ պիտի զարնենք ու զարնուինք: Տե՛ս, մտածէ՛, եթէ գործիդ կուզայ, գնացէք լուր տուէք:

Կինը համոզուեցաւ, ձգեց գնաց: Բայց Պատուելին հանդիստ չեղաւ. կրնային այդ կնիկանը ետեւէն մարդ դրած ըլլալ, լրտեսել ու գալ զինքը ձերբակալել: Չէնքերը ձեռքը ախոռը իջաւ: Հոն գտնէն լսելով ծանօթ ձայն մը որ իր վրայ կը խօսէր մեղքնալով, բացաւ դուռը, ծանօթացուց ինքզինքը, եւ խնդրեց որ իրեն քիւրա կնոջ հին լաթեր եւ եաշմախ բերեն, և մէյմէլ ալ կուծ: Քիչ ետքը այսպէս ծպտեալ իբր քիւրա կին, կուծը շալակը, հեռացաւ, գնաց այդ ծանօթին տունը, եւ մարագը խոտերուն տակ պահուրտեցաւ:

Գեղին բոլոր տունները մանրագնին խուզարկութիւն կատարուեցաւ. փնտոողները եկան աս մարագին դուռն ալ բացին, բայց զիզուած խոտը տեսնելով՝ Բան չի կայ ըսին ու մեկնեցան: Հանի աղային տունն ալ փնտոողքի ելան. ա՛ն չզիտնալով Պատուելին տեղափոխութիւնը, բոլորովին այլազունեցաւ: «Իմ տունէս եթէ ատանի բան մը ելլէ պատասխանատուն ես չեմ, ես միշտ ձեզի հետ եմ» կ'ըսէր:

Այս միջոցին զինուորները զարհուրելի կերպով ծեծեցին Պէյլերեանի մշակները. ու առջեւին ձգած ասոնք առին տարին որպէս զի լեռը ցոյց տան: Գեղը 30 զինուոր մնաց. իսկ 300 հոգիի խումբ մը լեռը պաշարելու ելաւ:

Յիտուն զօրք առջեւին ձգելով, Պէյլերեանի մշակները՝ որոնք փախստականներուն պահուրտած տեղը զիտէին՝ զիշերանց լեռնէն վեր ելան զէնքը ձեռքերնին, կազմ եւ պատրաստ լուսնալուսն սպանեցին: Այդ միջոցին լեռան ստորոտն ալ կը պաշարուէր, հոն ալ զինուորները փա-

խուստի բոլոր ճամբաները բռնեցին: Եւ սակայն նորէն ձեռքերնուն պիտի թոցնէին հայ հալածեալները:

Ամէն օր թուզուտցիները հրոսակներին հացը և ջուրը կը տանէին. բայց երբ Արմուտան խուզարկութեան ենթարկուեցաւ, գեղացիները ա՛լ չկրցան կատարել յանձնառած պարտականութիւննին: Ու լեռը եւ ոչ իսկ ջուր կար: Հրոսակները ծարաւի եւ անօթութեան հետ կը կռուէին. երբ ա՛լ տոկալու կարողութիւննին սպանեցաւ, հրոսակները հրամայեց ամէն վտանգ աչք անել ու դէպի գետակը երթալ: Այս հրամանին գործադրութեանը համար խուճը ճամբայ ելաւ. հագիւ թէ մեկնած էին և ահա ետեւի կողմէն զինուորները կը հասնէին:

Հրոսակները դէպի գահավէժը կ'երթային այնպիսի ուղիներէ ուրկից ցորեկ ատեն անգամ անցնիլը յանդգնութիւն կը սեպուի: Գլտորելով կ'իջնէին զառիվայրերէն. լեռան ստորոտը տեղ տեղ լոյս կը վառէր. պաշարողներուն ճամբարն էր: Յանկարծ պահապանները սանաձայն լսելով սկսան կանչել զօրքերուն. «Ելէ՛ք, ելէ՛ք, զաշախները կը փախն»: Մերինները հրազէնը ձեռքերնին կը շարունակէին յառաջանալ, ու լսեցին միանգամայն իրենց հայածուսին հետապնդող զինուորներուն խօսակցութիւնը: Ասոնք թէեւ արթնցած ազդարար ձայնէն, բայց կը զբոխակէին տեղերնէն ելլելու: «Թողէ՛ք անցնին երթան, կ'ըսէին. գլխնուս ցաւ մի՛ բերէք. անոնց գնտակէն ազատիլ չըլլար. ինչերնու է պէտք. քե՛օր են տեղացիները, անոնք թող աշխատին»: Աս քնացողները տեղացի ըսելով կը հասկնային Գուրիչայի զօրքերը, մինչդեռ իրենք Ակնէն եկողներ էին: Արդ՝ Արմուտան Պէյլերեանի կնոջը համար փրկանք անուած 120 ոսկին Գուրիչայի պաշտօնեաները մէջերնին բաժնած էին, առանց Ակնցիներուն մասնակցութեանը. հիմա ասոնց ալ հո՛ղը հատեր կը որ հանգիստնին պիտի վրդովէին, ու անուշ բուններնին ձգելով վտանգի պիտի ենթարկուէին: Մեր հրոսակներն ալ օգտուելով այս սկիպտիկ փիլիսոփայութենէն կրցին, առանց ամենազոյզն արգելքի հանդիպելու, իբր զբոսաշրջիկներ, անցնիլ երթալ: Հանգստորէն հասան գետակը, կուշտ մը ջուրերնին խմեցին. ու պարկերնուն մէջ մնացած երկու կտոր շոր պանիրը մէջերնին բաժնելով ճամբանին շարունակեցին մինչեւ որ վտանգի վայրերէն ազատեցան ու ապահով տեղ մը շունչ առին: Եւ ահա օրը լուսնալու ժօտ էր:

Անդին լեռան զուլբը զօրքերը առտուն ապշած մնացին երբ ակնիկալած փախստականներնուն տեղը կուծ մը ու վերմակ մը գտան միայն: Զայրացած՝ ասոնք առին ու թուզուտ գեղը տարին, և ամբաստանելով Հայերը թէ փախստականները պահողը իրենք են, գեղացիներէն քիչ շատ ազէկ վիճակ ունեցողները առին բանտ տանելու: Զօրքերուն մէկ մասը աս ձերբակալուածները Արմուտան տարին, ու հոն Պէյլերեանի տունէն շատ կաշառք տանելով արձակեցին: Իսկ զօրքին մեծագոյն մասը շարունակեց հրոսակները փնտոող:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՀՈԳԵՂԱՆԳԻՍՏ ԼՈՆՏՈՆ

ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Արեւմուտքի Մեծ Ծերունիին որդին՝ որ իր երկրին յարգանքի հարկը կը մատուցանէր Արեւելքի Մեծ Ծերունիին յիշատակին — ահա հոյակապ տեսարանը որ կը պարզուէր փետրուար Տին Լոնտոնի Ս. Պետրոս եկեղեցիին մէջ: Կլատուոյնի որդին, Հարաւնի երէցն էր որ այդ օրը արտասանեց զամբանական բարոյը այն հոգեհանգրտի արարողութեան միջոցին, զոր հանգուցեալ Նուպար փաշայի անգլիացի բարեկամները ու սքանչացողները կազմակերպած էին:

Եկեղեցին խոնուած բազմութիւնը նոր ապացոյց մըն էր թէ Նուպար փաշա ի՛նչ յարգանք ու համարում կը վայելէր այս մեծ երկրին մէջ, որ սակայն այնքան այլաձեւի է օտարներուն համար: Անգլիական կառավարութեան ներկայացուցիչները առաջին տեղը կը բռնէին անոնց մէջ: Շատեր եկած էին անոնցմէ որոնք հեռուանց գիտէին այն գերը զոր Նուպար փաշա խաղացած էր Եգիպտոսի վերանորոգման մէջ, միայնակ կուսելով արեւելեան ապակաւութեան ու բնաւորութեան դէմ: Բայց մանաւանդ հոն էին այն Անգլիացիները որոնք, «Նուպարի շաւղին հետեւելով» (ինչպէս կ'ըսէ Տէյլի Նիոզզ), կամ անոր գործակցելով, Եգիպտոսի նոր վարչութիւնը հասուցին այն բարեկարգութեան աստիճանին՝ որ այսօր աշխարհի սքանչացում կը պատճառէ:

Բայց Նուպար փաշայի համբաւը Եգիպտոսի եւ Անգլիոյ սահմաններէն շատ աւելի հեռուն տարածուած էր: Եկեղեցին փութացած էին բազմաթիւ անդամներ Լոնտոնի գեսպանական մարմինին, որոնց մէջ մասնաւոր ուշադրութիւն կը գրաւէին Չինաստանի գեսպանը ու իր խորհրդականը՝ իրենց կապտագոյն մետաքս հագուստներով, Հընդկատանի նախկին փոխարքայ լորտ Նորթլուքը, լորտ Հարրիս, լորտ Բէյ, լորտ Ուարնքլիֆ, լորտ Օնսլո, լորտ Լոք, լորտ Ամբլըսթ, Պ. Ճէյմս Պրայս, Սըր Չարլզ Տիլք, Անգլիահայկական ընկերակցութեան նախագահ Պ. Սիլվէստըն, և բազմաթիւ ակնաւոր անձեր, որոնց ցանկը երկար պիտի ըլլար դնել հոս: Կլատուոյնի այրին ցաւ յայտնած էր որ կարող չէ ներկայ գտնուիլ արարողութեանը, բայց հոն էին իր աղջիկը՝ տիկին Տրիու եւ իր հարսը՝ տիկին Հէրպերգ Կլատուոյն: Լոնտոնի հայ գաղթականութեան զրեթէ բոլոր անդամները ներկայ էին, եւ Բարիզէն յատկապէս հրաւիրուած էր տեղին հոգեւոր հովիւ Հ. Պարոնեան, որ կը ներկայացնէր միանգամայն Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքը:

Այլպիսին մանիշակագոյն ծածկոցը, որ Ն սկզբնատառը կը կրէր, միակ զարդարանքը կը կազմէր եկեղեցիին:

Ամբողջ հանդէսը շատ պարզ էր, ու ատով ալ աւելի ազդական: Արարողութեանէն առաջ եւ ետքը, Կորտանի Տղաքները Որբանոցին նուագախումբը սրբազան երաժշտութեան կտորներ նուագեց: Արքայական Ամբողջը զօրքերու նուագախումբն ալ մասնակցեցաւ արարողութեան երաժշտական մասին:

Կէս օրը մէկ քանի վայրկեան անցած էր երբ եկեղեցականները եւ զպիւրները եկեղեցի մտան եւ սկսան հոգեհանգիստի աղօթքները ու երգերը: Հ. Պարոնեան կարգաց «Աստուած յաւիտենական, անիմանալի Խորհուրդ» աղօթքը հայերէն: Պատանի զպիւր մը վճիտ ձայնով երգեց Հէնտկի գլուխ-գործոցին գեղեցիկ մեներգը, «Գիտեմ որ փրկիչս կ'ապրի», ու Պատ. Սզէֆըն Կլատուոյնը ամպիոնը բարձրացաւ:

Պ. Կլատուոյնի քարոզը հակիրճ էր, շատ բարեյարմար, եւ տեղ տեղ իրօք պերճախօս: Իրեն բնաբան ընտրեց «Մարդոց վրայ իշխողը արգար ըլլայ, ու Աստուծոյ վստիչը իշխէ» (Բ. Գիրք Թագաւորաց, ԻԳՅ): Քարոզիչը անմիջապէս ծանրացաւ Նուպարի մեծ ասպարէզին և յատկանշանական հանգամանքին վրայ: Նուպարի փառասիրութիւնն էր «այնպէս իշխել որ բարձրացնէր ժողովուրդը» որուն ազգայնութիւնը ընդունած էր, «ժողովուրդը զոր սիրեց եւ որուն համար աշխատեցաւ»: Նուպարի կեանքը նուր մը եղաւ աշխարհի համար, որ անկից պիտի չզրկուի՝ նոյն իսկ «մահուան խորհուրդով»: Աշխարհս չ'աղքատանար մեծ մարդու մը մահուանովը. անոր իտէաւնները, անոր նկարագիրը աշխարհի «մշտնջենական ժառանգութիւնը» կը գառնան: Մեծ մարդ մը մահուանէն ետքն ալ «միշտ կ'ապրի մեր մէջ»: Ապրողներուն պարտքն է «ըմբռնել անոր ոգին, եւ ձեռնարկել անոր թողուցած գործին»: Քարոզիչը յիշեց Նուպարի մըղած պատերազմը ընդդէմ ապականութեան, այնպիսի երկրի մը մէջ որ այնքան երկար ատենէ ի վեր վատթար վարչութեան մը ներքեւ կը գտնուէր. յետոյ անոր ջանքերը բարուբեւու երկրագործին վիճակը, ուղղման ցիտական մեթոտներով. անոր քաջութիւնը ընդդէմ հակառակութեան եւ առժամայ ձախողուածքներու. անոր թափանցող միտքը. անոր մէկ-հատիկ պաշտօնավարութիւնը յաջողաբար վեց իշխանի ներքեւ. անոր վեհանձնութիւնը եւ առատաձեռնութիւնը. անոր «ընտանեկան կեանքը» իբր օրինակ մը մեզի համար. անոր սէրը Եգիպտոսի նկատմամբ, ինչպէս իր հայրենի Հայաստանին համար: Նուպարի լայն սիրտը, ըսաւ քարոզիչը, զինքը միջց գէպի կորտոն, որուն առաջին անգամ հանդիպեցաւ Կ. Պոլիս, երբ Կորտոն Չինաստանի մէջ Թայբինկներու ապստամբութիւնը ջախջախած էր արդէն: Նուպար ամբողջ ժամ մը Կորտոնի հետ խօսեցաւ առանց հասկնալու թէ ո՛վ էր ան, եւ բաւական ժամանակ անցաւ մինչեւ գիտցաւ անոր ո՛վ ըլլալը: Այն ատեն տեսաւ թէ «Կորտոն Սուտանի յարմար մարդն էր», միակ մարդը որ կարող էր ջնջել գերութիւնը, այդ հակամարդկային ոճիրը զոր Նուպար կ'ատէր: Քարոզիչը յիշեց Նուպարի խօսքը Կորտոնի մա-

սին, « Հպարդ էի ընտրութեանս համար » : « Ու Հայաստան կրնայ իրամբն հպարտանալ իր այդ զաւակովը » : Ահնարկ մը նետելով միջազգային քաղաքականութեան վրայ, քարոզիչը արդարութեան հարկը մատուց Նուպարի ուղղամտութեան եւ անձնութեան այն ֆրանսացի եւ անգլիացի պատուիրակներուն նկատմամբ սրտնք եզրկատական խնդրին կերպարանափոխութեան զանազան շրջաններուն մէջ դերակատար գտնուեցան : Տեսականին մէջ, ինչպէս քարոզիչը ըսաւ, Նուպար նախամեծար պիտի համարէր անկախ, ինքնօրէն Եղիպտոս մը : Բայց Նուպար պետական մարդ մըն էր, որ ստիպուած էր գործել ձեռքը ունեցած դարձիքներովը, իր գտած երկրովը ու մարզերովը : Որչափ ալ Նուպար Փրանսան սիրէր, տեսաւ թէ իր սքանչացման առարկայ դարձած այս երկրին — Անգլիոյ — մէջ էր Եղիպտոսի յոյսն ու ապագան : Ուստի ուղղամտօրէն աշակեցեցաւ Անգլիոյ ներկայացուցիչներուն, յօգուտ իր որդեգրած երկրին : Այս ամէնը, ըսաւ քարոզիչը, « Եղիպտոսի ժողովուրդը չի մոռնար այսօր, եւ առիակ է որ մեզ մղեց այս արարողութիւնը կատարելու՝ իր յիշատակը պատուելու համար » :

Աղօթքներ ու երգեր աւարտեցին այս պատկանելի հանդէսը, որ անգամ մըն ալ Անգլիոյ էն փայլուն ներկայացուցիչներուն ուշադրութիւնը կը դարձնէր թէ՛ այն մարդուն վրայ որ, ինչպէս կ'ըսէ Տէյլի Նիոզը, « այս գաւառն լաւագոյն պետական—մարդերն մին եղաւ », եւ թէ՛ այն երկրին վրայ որ այդպիսի զաւակ մը ծնելու փառքը ունեցած էր :

Հոգեհանգստին հետեւեալ օրը, անգլիական լրագիրները հրատարակեցին հետեւեալ նամակը զոր Նուպար փառայի էն վաղեմի եւ մտերիմ բարեկամներէն մին, Պ. Հէնրի Օրընհէմ, զրկած էր Ս. Պետրոս եկեղեցիին երէցին, 200 անգլ. սօկիի չէքով մը :

« Պատուելի եւ սիրելի Տէր, — Տիկին Նուպար ինէ ինչպիսիք է ներփակ ձեզ յանձնել 200 սօկիի նուէր մը կորստնի Տղաքները Որբանոցին համար, իբր երախտագիտութեան հաւաստիք մը՝ իր եւ ընտանիքին կողմէ՛ այն արարողութեան համար որ այսօր տեղի ունեցաւ Ս. Պետրոս եկեղեցիին մէջ ի յիշատակ իր ողբացեալ ամուսնոյն :

« Տիկին Նուպար ինէ կը խնդրէ ըսել թէ խորապէս զգածուած է այս երկրէն իրեն յայտնուած համակրութեան ազնիւ արտայայտութիւններէն, որոնց ամէնէն ուշագրաւ յատկանիշն է այս ատուան հոգեհանգստի արարողութիւնը » :

Լ. ԶԱՐԹՈՒՄԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Տ Ի Ա Ր Պ Է Ք Ի Ր

ՏԻԱՐՊԷՔԻՐ, 23 յունուար

Մեր կացութիւնը ո եւ է փոփոխութիւն կրած չէ դէպի լաւը. ընդհակառակը : Մեր վրայ ծանրացող երկու մեծ աղէտքները, անսպահովութիւնը եւ թշուառութիւնը, կը ձնշեն մեզ միշտ : Արհեստաւորները ձեռուրնին ծալած կեցած են, ու խանութպանները օրերով կը սպասեն յաճախորդի մը : Ալ կ'երեւակայէք թէ ինչ է ուրեմն կացութիւնը անոնց որ բա՛ն մը չունին, եւ որոնք չոր հացի կարօտով՝ օրն ի բուն հարիւրաւոր զաներ կը ծեծեն աղիողորմ արցունքով : Եւրոպական եւ ամերիկեան մարդասէրներու նպաստները իսպառ դադրած են. իսկ տեղական կառավարութիւնը որպէս միշտ խուլ ու կոյր է այդ աղետարէ աղաղակներուն ու սրտաճմլիկ տեսարաններուն հանդէպ : Աշնան մէջ միայն՝ քանի մը հազար դրուշ պետական նպաստ բաշխուեցաւ ասորի, յոյն, քաղղեացի, կաթոլիկ եւ այլ քրիստոնեայ կարօտեալներու. իսկ հայ թշուառները բացը թողուեցան, առարկելով թէ 98ի պարսնան անոնց բաժինը տրուեցաւ իրենց : Կը յիշէք անշուշտ թէ աս այն նպաստն էր որ 16,000 Տիարպէքիքի կը շրջակայ գիւղացի կարօտեալներու բաշխուեցաւ, մարդ զուլս ԵՐԵՍՈՒՆ փարա...

Իսկ կեանքի ապահովութիւնը կը շարունակէ մեզի անծանօթ բարիք մը մնալ : Երկար պիտի ըլլար վերջին վեցամսեային Հայերու վրայ ի դործ դրուած ոճիրներու ցանկը զնել այստեղ : Յիշեցէ վերջին մէկ քանի դէպքեր միայն :

Չնքուշի կաշեվաճառ երիտասարդ Հայ մը, Սարգիս, հայր երկու որբերու, Լճէն քաղաքս եկած պահուն, զինքը բերող թիւրք շորեպանը կռահելով որ Սարգիսի բով 2-3 հազար դրուշ զրամ կայ, կը յարձակի վրան պաշտնով, կը հարուածէ կը սպաննէ, ու զրամն ու գոյքերը առած հանգարտօրէն Տիարպէքիք կը մտնէ : Հայ գիւղացիները 15 օր յետոյ կը գտնեն զիակը, եւ կուգան իմաց կուտան կառավարութեան, որ, փոխանակ քննութիւն բանալու, լուր տուողները կը բռնէ եւ ամսու մը շափ կը բանտարկէ : Ի վերջոյ ոճրագործը Լճէ բռնուեցաւ, եւ իրեն տրուած միակ պատիժը ան եղաւ որ կողոպտած զրամը առնուեցաւ իրմէ...

Քաղաքիս Հոռոմոն դուրը գտնուած ջրաղացի մը մէջ 97ի աշնան թիւրքերը հրացանով հայ շաղացպան մը սպաննած էին, առանց յետոյ ոստիկանութենէն նեղուելու : Նոյն ջրաղացին մէջ 98ի աշնան Սասունցի հայ շաղացպանի մը զիակը գտնուեցաւ վզէն մորթուած երկար չարչարանքներով, այնպէս որ բոլոր շաղացքը ու ալիւրը արիւնով ներկուած էր : Հաստատուեցաւ թէ ոճրագործ

ները թիրաքեր էին, սակայն անպատիժ մնացին:

Մուրաւ անուն հայ հովիւ մը Մէրախնցի թիրաքի մը ծառայութեանը մէջ կը գտնուէր, անոր ոչխարները արածելով: Վերջերս օր մը թիրաքը կուգայ ոչխարները կը համրէ եւ որպէս թէ հատ մը պակաս գտնելով՝ կը գայրանայ հովուին անհոգութեանը եւ խեղճին կուշտին գաշայնի հարուած մը տալով անշունչ գետինը կը փռէ եւ կը հեռանայ: Մեծողին այրին եւ որբերը հիմա քաղաքիս փողոցները կը շրջին հաց մուրալով:

Քաղաքացի հայ երիտասարդ մը, արհեստով ջուհահակ, կիրակի օր մը Գըթըլպէլ գիւղին մէջ թիրաքէ մը վիրաւորուելով, հազիւ մինչեւ քաղաք կը քաշկրտէ ինքզինքը եւ կ'իյնայ կը մեռնի:

Այս տխուր շարքը փակելով, անցնինք այն խուզարկութեանց որոնք ահա երկու ամիս է քաղաքիս մէջ սկսած են: Ոստիկանութիւնը սկսաւ յանկարծ խուզարկել բոլոր բրիտանականներու տունները, եւ տպեալ ու անտիպ ինչ գրութիւն որ գտնէ՝ կը տանի կը յանձնէ դրաքննիչ յանձնախմբի մը որ կազմուած է տասնի չափ թրքացած-բրիտանականներէ: Ահ ու սարսափ կը տիրէ քաղաքիս մէջ այս խուզարկութեանց պատճառաւ, որոնց հետեւանքով մէկ քանի կիներ վիժեցին ու մեռան: Ոչ ոք զիտէ թէ ինչ է վնասածնին, ուստի ամէն մարդ ունեցած գիրքը կ'այրէ ո եւ է պատրուակ չթողու համար ոստիկանութեան ձեռքը: Այս խուզարկութեանց հետեւանքով շատեր ձերբակալուեցան, բայց քիչ շատ երկար բանտարկութիւններէ յետոյ ազատ թողուեցան: Կ'իմանանք թէ այս խուզարկութիւնները կը կատարուին նաեւ ամէն նահանգներուն մէջ: Փարզինէն Քիլահգասպարեան կարապետի գրութիւնները բերուած են քննուելու: Նոյնպէս Սեւերէկէն բերուած են երեք հոգի, մին Գալէնտէրեան Մկրտիչ է. ֆէնտի, որ Սեւերէկի կարօտեալներուն նպաստ բաշխող խնամակալութեան ատենապետն է, միւրը 60 ամեայ Յարութիւն էֆէնտի անուն անձ մը: Ասոնք Ուրֆայի բարերար Ամերիկուհոյն բացած որբանոցին կ'օգնեն եղեր՝ բուրդ գնելով զրկելով Միս Շաղղըքին, եւ անկէ զրամ ընդունելով՝ կը խնամեն եղեր Սեւերէկի կարօտեալները: Խեղճերը 15 օրէ ի վեր բանար կը մնան հաս:

Այս կացութիւնը արիւննիս չորցուցած է. շուարած ենք. ո՛չ անցազիր կուտան հեռանանք երթանք այս երկրէն, ո՛չ կը թողուն մենք մեր իւղին մէջ խարկուիքը մընանք տեղերնիս: Օր նոր, վախ նոր, խուզարկութիւն նոր եւ ձերբակալութիւն նոր:

Աւելորդ է Բամազանի առթիւ շուկաներու մէջ քրիտասաններու կրած զրկանքներն ու անարգանքները նկարագրել, զի սովորոյթ եղաւ գնաց մեզ:

Ինչպէս յայտնի է, զինուորական տուրքը երկու տարի է չէր հաւաքուեր՝ կայսերական հրամանով: Ամիս մը առաջ պայմանաժամը լրանալուն, անօթի հարկահաւաքներ ու զիւղախմբերու միախրներ ոստիկան-զինուորներու վահաններով խուժեցին զիւղերուն վրայ ու սկսան զիւղացիները ծեծել, խոշտանգել, խեղճերուն անկողինն ու եզը

ծախել: Սեւերէկէն, Փարզինէն, Պշերիկէն, Լճէն, Արդնիկէն, Հայնիկէն եւ Ջերմուկէն խումբ խումբ Հայեր քաղաք եկած լալագին կը խնդրէին դարման մը՝ այդ տուրքերը կամաց կամաց ժողովուրդ: Ու ահա անցեալ կիրակի գիշեր Պատրիարքարանէն եկած հեռագիր մը կը ծանուցանէր թէ զինուորական տուրքին հաւաքումը տարի մը եւս յետաձգուած է: Ասիկա անշուշտ մեծ թեթեւցում մըն է. սակայն մինչդեռ քաղաքիս բրիտանականները առանց բան մը վճարելու ազատեցան, անդին զիւղերուն մէջ հարիւրաւորներէ բռնի գանձած կ'իս այդ տուրքը, զիս պաշտօնապէս յետաձգման հրաման չբացած:

Մօտակայ վայրերուն մէջ տիրող կացութիւնն ալ երկիրագիր է: Իմացած էք հարկաւ Բաղէշի Գէպըք, որու միջոցին ոսկերիչներու շուկան կողոպտուեցաւ եւ 7-8 հայ սպանուեցան ու 40 հոգի վիրաւորուեցան: Այս դէպքին շարժառիթը եղած էր Սերոբ հայ հրօսապետին Բաղէշի մօտենալը իր ընկերներով: Զօրք զրկուած էր անոնց վէժ, որոնք սակայն ձեռնունայն ետ դարձած կ'իս վիրաւորներով: Ասիկա պատճառ եղած է թիրաք խուժանին ոտքի ելլելուն:

Այժմ կ'իմանանք թէ Մուշեղ անուն հայ հրօսապետ մը, որ ժամանակէ մը ի վեր Բաղէշի շրջակայքը կը թափառէր եւ 20 է աւելի թիրաքեր եւ մատնիչ Հայեր սպաննած էր, 15-20 օր առաջ ձերբակալուելով՝ սպանուած է՝ ականջին մէջ գնդակ մը ընդունելով: — Կ'իմանանք նոյնպէս թէ անցեալ շաբթու Զնքուշի մէջ Քիւրտերը քանի մը տուն ու խանութ հրկիզած են:

Միայն մենք չենք այս ընդհանուր կացութիւնէն տառապողը: Կառավարութիւնը օտարականներու նկատմամբ ալ կակուղ գիրք մը բռնած չունի:

Գերմանիոյ կայսրը Պոլիս չեկած, ամէն տեղ կը խնուէր թէ գերման գաղթականութիւն մը օլիտի դայ Անանտուրի մէջ հաստատուի: Տեղիս թիրաքերը, այս շուրջն վրդոված, իրենց մէջ գումարումներ ստեղծեցան եւ հանրագրութիւններ պատրաստելով՝ ատլթանի զրկեցին, խնդրելով թող չտալ Գերմաններու գալուստը: Եւ ահա սուլթանին ծննդեան տարեդարձին օր կուսակալը յանկարծ փակել տուաւ տեղիս գերմանական որբանոցը, ուր 60 է աւելի երկու սեռէ որբեր ժողոված կը խնամէին: Խեղճերը դուրս նետուեցան եւ որբանոցը ցարդ փակուած կը մնայ. զերմանացի տեսուչը օրական 40 փարայով առ այժմ այդ որբերը պահել կուտայ ասդին անդին: Տեղիս անզրիական հիւպատոսին թարգմանը կուսակալին դիմեց՝ որբանոցին վերաբացման համար, սակայն ձեռնունայն ետ դարձաւ. կուսակալը կ'ատարիէ թէ առանց հրաման անուելու ներքի չէ որբանոց բանալ: Գերմանացի տեսուչը եւ իր կիներ, որոնց այս օրերս եկած միացած են նաեւ երկու կիներ եւ էրիկմարդ մը, Վր շարունակէ իր զիմուները, բայց մինչեւ հիմա առանց արդիւնք մը ձեռք բերած ըլլալու:

Միւս ամերիկեան երկսեռ որբանոցը ահա երկու տարի է կը շարունակուի, 70 մանչ եւ 70 աղջիկ որբերով: Յաւայի է ըսել որ խեղճ պղտիկները ո՛չ կրթութիւն կը ստանան հոն, եւ ո՛չ արհեստ մը կը սորովին. կ'ուտեն կը խմեն կը պառկին, ոչխարներու պէս:

Հայոց որբանոցը շատ աւելի զոհացուցիչ է. զի ոչ միայն հաց ու հանդերձ կը տրուի հոն դանուող 33 որբերուն, այլ և կարգալ-զրել կ'ուսուցուի մասնաւոր խնամքով:

Մէրախնի ամերիկեան միսիոնար Մըզըր Անարիու տարիուկէսէն աւելի է 20էն աւելի որբեր ժողոված կը խնամէ Մէրտին, զորոնք Երուսաղէմ պիտի զրկէ գերմանական որբանոցը, սակայն անցագիր ստանալու անկարող կը զանուի հակառակ իր անդու ջանքերուն:

ՄԱՐՏԻԿ ԱՂԱ

(ՎԵՊ)

է

Ամիս մը վերջը՝ երկուշաբթի առտու մը՝ Լուսին պարտէզին առջեւէն անցնող մը պիտի կրնար տեսնել Մարտիկ աղան, որ 6-7 հոգիներու մէջ գահակալած, գէմքը խորոխ ու ճառագայթող, շարժումը բուռն ու տիրապետական, կը խօսէր մեծ ոգետրութեամբ:

Աւանդական ֆէսը ալ զլուխը չէր. անոր տեղ կը լայննար հիմա կէս-զլան խոշոր զլխարկ մը, զոր սակայն՝ ֆէսի պէս՝ ուռած ճակտին ետեւ նետած էր: Գալով իր շուրջը գտնուողներուն, ասոնք բնաւ չէին նմաներ Պոլիս ունեցած ծանօթներուն, ամենքն ալ շնորհքով, տարիքոտ պատուաւոր անձեր:

Հիմակուանները սանկ նանկ մարդեր, ըստ բազմի ժողովուած կարծես, աղքատ կամ էսնաֆ գասակարգին պատկանող գաղթականներ, անխնամ հազուած:

— Բայց — կարծեմ՝ դուք յեղափոխականներուն գէմ էիք:

— Այո՛, բայց ոչ բոլոր յեղափոխականներուն գէմ... Իմ ատելութիւնս, բարկութիւնս Հնչակեաններուն գէմ էր... ան խարդախ, խաբեբայ, ոճրագործ մարդերուն որոնք Ազգը...

Կատաղի յարձակում մը Հնչակեաններուն գէմ. Մարտիկ աղա դուրս կը թափէր ինչ որ իր երկարատեւ ծումապահութեանը միջոցին կուտակուած էր ներսիդին զայրոյթ ու նախատինք յեղափոխականներուն գէմ, զոր Հնչակեաններուն հետ կը նոյնացներ հիմա: Երգիծական շքեղ հանդէսի մը մէջէն խաբազանհար անցուց բոլոր հնչակեան պարագլուխները, իր պերճաբոս բարկագլութեան

փրփուրը թափելով անոնց վրայ, միեւնոյն ջուրով լուարով ամենքն ալ:

— Գալով Դրօշակեաններուն, անոնք ուրիշ... ամենքն ալ անձնուրաց, խելացի, զարգացած մարդեր, հերոսներ, որոնք...

Գովեց, հիացաւ, պատմեց: Իր վառ, զիրաստեղծ, խոշորացուցային երեւակայութեամբ Մարտիկ աղա Սուրեանին իրեն հայթայթած նախադիմին վրայ կ'ասդնագործէր, կ'աշխատէր, հրահանգին վրայ գէղ մը փոփոխութիւններ կը կատարէր:

— Ազգին փրկութիւնը անոնցմէ է... եզրակացուց, ու լռեց:

— Ի՛նչ, բան մը պիտի ընեն արդեօք, հարցուց հետաքրքրութեամբ սեւուլիի գէմքով մէկը, սկնոցաւոր, անիկա իսկ զոր տեսանք եկեղեցիին մէջ բարձրաձայն հեռագիրները թարգմանող:

— Քիչ ատենէն... կը տեսնաք... ըրաւ զլսու խորհրդաւոր տաապնումով մը...

— Իրա՛ւ... յոյս մը կայ...

— Աս օրուան օրս Դաշնակցութիւնը, ըսաւ Մարտիկ աղա արհամարհոտ քմծիծաղովը մէկուն որ շատ բան գիտէ ու կ'արգահատի տգէտներուն վրայ... բայց մէկէն լռեց. ըսելիքը շատ ծանր բան մըն էր. Ազգին շահը կը պահանջէր գաղտնսպահ մնալ:

— Դաշնակցութիւնը ի՛նչ... հարցուց ճուտտիկ զիրուկ գաւառացի մը:

— Ոչինչ, ոչինչ... Հա՛, աղէկ միտքս ինկաւ, աս օրուան հեռագիրները ի՛նչ են...

Հեռագիր թարգմանողը մէկէն վէջ նետուեցաւ փութկոտ...

— Վեց մեծ Պետութիւնները Բ. Դրան իլլթիւմաթում մը ներկայացուցին...

Հետզհետէ որ կը թարգմանէր յիշողութեամբ, Մարտիկ աղա ձախ ձեռքով՝ ծոնդին վրայ հանգչեցուցած աջ ոտքը շփշփելով՝ խոշոր շունչերով կը ծխէր, հասկցողի, թափանցողի խորհրդաւոր ձեւով մը զլուխը կ'երեքցներ, ու քթին տակէն կը խնդար...

— Հը՛... հը՛... վա՛յ շունչանորդի վա՛յ...

Երբ միւսը լմացուց, Մարտիկ աղա սկսաւ բացատրել, մեկնաբանել, հեռագիրներուն թագուն իմաստը մատնանիշ ընել իր ունկնդիրներուն:

Ի՛նչ պատահեր էր:

Մարտիկ աղային առջին քայլը գէպի ֆեղափոխութիւնը, Տէրրօրին միամիտ վախը ընել տուած էր իրեն:

Բայց այդ բռնի, դժկամակ քայլը արշաւի կրցած էին փոխել Սուրեանին հետ ունեցած երկրորդ տեսակցութեան այնքան որոշ խօսքերը որոնք ընդլայնումը, բացատրումը եղած էին արդէն առջի տեսակցութեան մէջ Սուրեանին սարկեցուցած թելադրութիւններուն:

Այդ խօսքերը իր երեւակայութեան հեռապարզած էին սպազայի պատկերը երկու դրուագով. մէկը մուլթ, անկելի,

սպաննազին, միւսը լուսաշող ու փառապանծ, — սոսկալի պատիժները որոնք կը սպաննային Յեղափոխութեան չօղ- նոց հարուստ Հայերուն, ինչպէս շքեղ վարձատրութիւն- ները որոնք կը սպասէին միաներուն — : Ասիկա իրեն ցուցուցած էր միակ ճշմարիտ ու երջանկաբեր ուղին որուն հետեւելով պիտի կրնար իր բնագոյններուն գոհացում ապ, փառքի գափնիներ ժողովել, միանգամայն Տէրօրէն գեր- ծանիլ ինչպէս նաեւ սպառաջ սպաննալիքներէ, մանաւանդ որ իրեն կատարեալ ազատութիւն տրուած էր իր հակա- յեղափոխական խանդին, յարձակողական աւելնին լայն հոսում տալ զէ՛թ Հնչակեաններուն դէմ : Ուայս ամենքը Մարտիկ աղան իր էութեան էն խորունկէն, ամէն կողմ- րէն սպաւորած, տիրակալած էին, ու իր հակաիեղափո- խական հաւատքը մեծապէս խախտած :

— Ազգային բարերա՛ր... պատմութեան մէջ անուն պիտի անցնի... պատիւներ, աստիճաններ...

Այս բառերը անգագար կը հնչէին Մարտիկ աղային ականջներուն մոգական թաւալումներով, իր աչքերուն շքեղ տեսարաններ կը պարզէին, ուր ինքզինքը կը տես- նէր իշխանական դիրքերու, փառքի արբշիտ մթնոլորտի մը մէջ, պատիւներով, շքանշաններով բեռնաւորուած, երախ- տազէտ ժողովուրդէ մը ծափահարուած, յարգուած, ամէ- նէն ազգային բարերար յորջորջուած, լրագիրներուն մէջ գովուած, եկեղեցիներուն մէջ օրհնարանուած, ու նոյն իսկ, արձանի ձեւին տակ, մեծ հրապարակի մը մէջտեղ կանգուն, բարձրագլուխ ու խորխտ :

— Արձան...

Աս բառը սակայն սոսկում կ'ազգէր Մարտիկ աղային որ մենեւէ շատ կը վախնար. իր իմաստասիրական խօս- քերէն մէկը Պոլիս, սա էր, կարճ ու վճռաձեւ :

— Մեռնիլը շատ զէջ բան է :

Իր ականարկը ուրեմն յետամահ փառքի այդ դիմեա- տեսիլ կոթողէն կամաւ անշատուելով, երկարօրէն կը հանգչէր պատկերին միւս զրուագիներուն վրայ, որոնց հը- մայող գեղեցիկութեանը, կուրցնող փայլին զօրաւոր շեշտ մը կը զարնէր ազգային փրկութեան գործին քսակը ա- դահօրէն գոց բռնող Մարտիկ աղայի մը սպաննացող սպառաջ վիճակը, միշտ Սուրեանին ըսածին համեմատ, զոր Մարտիկ աղա չէր ուզեր, չէր կրնար քննադատու- թեան ենթարկել, տարակոյսին արգեօքներովը, հարցա- կէտերովը խախտել :

— Ազգային բարերա՛ր, պատիւ, աստիճան, պաշտօն, այս մոգական բառերէն բղխող փառքի արբշտութիւնը, տենողը Մարտիկ աղային միտքն ալ կը պղտորէր, աչքն ալ կը կուրցնէր, իր ունեցած խելքը կը փակէր շատ մը ա- տարկութիւններու, տարակոյսներու թերահաւատութեանը առջեւ, այն խանդալատումին, շլացումին մէջ զոր կը փո- խանցէր իր էութեան արմատը կազմող հզօր բնազդներուն :

Բայց իր խարխլոց հաւատքին տապալումի վերջին հարուածը տուողը, զինքը մէկէն՝ Դաշնակցական կու- սակցութեանն ներկայացուած Յեղափոխութեան զիրկը նեղողը եղաւ շաբաթ մը անդադար տեսող ընթերցումը

Դրօշակի բուր թիւերուն, թուցիկ թերթերուն, յայտա- բարութիւններուն, յեղափոխական հրատարակութիւննե- ռուն ահագին հաւաքածոյին զոր Սուրեան տուած էր ի- րեն կարգալու համար : Այդ ընթերցումէն Մարտիկ աղա զուրս ելաւ իբրեւ յեղափոխական գաշնակցական աւազա- նէ մը : Ա՛լ հաւատափոխութիւնը կատարուած էր :

Արդէն՝ առաջուրնէ, Սուրեանի հետ ունեցած խօսակ- ցութիւններէն արմատապէս ապաւորուած, փառասիրա- կան երազներու տենչէն բռնուած, այդ շաբաթուան սը մեքենական, ընկճող, շնչասպառ ընթերցումէն, որուն տեսողութեանը միջոցին պահ մը իսկ խորհած չէր կարգա- ցածին վրայ որ զրոշմուած էր իր ուղեղին վրայ ինչպէս ձայները ձայնագիրին՝ Մարտիկ աղա զուրս ելաւ « յոտից ցլլուխ » յեղափոխական կազմապարուած, գլուխը խճող- ուած այդ չմարտուած, չզտուած ընթերցումին բզզումնե- ռովը, երեւակայութիւնը՝ կարգացած գէպքերուն, կոխնե- ռուն, սպաննութիւններուն, հայրենասիրական մարտա- հրաւեր յօգուածներուն արիւնոտ պատկերներովը, փողա- ղողոյ, փետրուոյց բացատրութիւններուն, խրոխտահնչակ թմբկահար բառերուն զիւցագներգական բաղխումներովը, շաշումներովը, գոչիւններովը տակնուվրայուած, տնդու- տած, ցնորատեսուած :

— Աս ի՛նչ մարդեր են եղեր պէ՛ս աս Դրօշակեանները, բացագանչեց, երբ լմնցուց, Մարտիկ աղա, կարծես ջախ- ջախուած այն պատկառազու, վայրագ մեծութեանը, ա- րիւնոտ մութ փառքին առջեւ որով իր վառ երեւակայու- թեանը կը ներկայանար Դաշնակցական կուսակցութիւնը՝ — իր յեղափոխական բազմամեայ զրականութեան ու գոր- ծունէութեան բուրը զրութիւններէն ու գէպքերէն Յայտ- նութեան ցնորքի մը վիթխարի ուժովը ցայտող, Սարտափին գոխայնութեանը մէջ պլլուած, սպաննազին ու չարա- շու՛ք :

Աս վագրերուն բարեկամութիւնը շահելու էր :

— Աս մարդերուն հետ խաղալ չ'ըլլար. աս ի՛նչ սա- ներ ըրեր են :

Աս ի՛նչ բաներ զրեր են, աւելցնելու կը մտնար Մար- տիկ աղա :

Ընթերցումը հազիւ լմնցուցած, իր ապշած մօրը ու աղջկանը Դաշնակցական յեղափոխութեան տարօրինակ զասընթացք մը լսլրտեց, անհիթիթ խառնուրդ մը, խելա- ցնոր հրմշտուում մը, իրարանցում մը խճողուած մտքէն բերանը գահալիժող նորստաց բաներուն, երեւակայու- թեանը մէջ շաշող յեղափոխական խոշոր բացատրութիւն- ներուն, բառերուն, շիոթ, հաշմոտած գէպքերու, կարատ- ուած, մէջտեղէն սկսուած, սկիզբէն վերջացած պատմու- թիւններու, բուն՝ ծայրայեղ շարժումներով կենդանաւոր- ուած, որոնք օգնութեան կը հասնէին՝ իր հապճեպին մէջ վիժող, սայթաքող հզօր մարմալին մեր մարդուն՝ մէկ ցայտով զուրս թափելու շաբաթուան մը ընթերցումին իր յիշողութեանն փրթող ծուէնները :

Քանի մը օր արժանապատուութեան վարանումներու զոհելէն ետքը՝ գացած Սուրեանը գտած՝ ու անկեղծօրէն

խոստովանած էր իր նոր «հաւատքը»... Ինքզինքը հաւատարմորդ դաւանած էր Հայ Բեղափոխական Դաշնակցութեան, եւ խոստացած էր իր քսակը անոր տրամադրութեան տակ զնել, չմոռնալով, Սուրբանին առջեւ իսկ, Հնչակեանները կատարի բառադիտառողի մը ենթարկել:

— Իմ բարկութիւնս անոնց դէմ էր, շիտակը կ'ուզէր նէ եւ ոչ ձեզի...

Սուրբան նորէն խօսած էր Բեղափոխութեան վրայ, այսինքն Հնչակեաններուն ու Դաշնակցականներուն վրայ, տեղեկութիւններ հաղորդած էր, մօտալուտ ապագայի մը խորհրդաւոր կարելիութիւնները լռելեայն իմացուցած, յոյսեր տուած, ու շնորհակալութիւններ յայտնած էր յանուն կուսակցութեան:

Այդ օրէն՝ Մարտիկ աղա, ֆէսը մէկ կողմ նետելով ու անոր հետ նախկին կարծիքները, իր աթոռը հաստատած էր Լուսին պարտէզը:

Յաջողած էր բազմաթիւ ունկնդրութիւն մը ճարել, ըստ բազմին կազմուած, այլասեռ, անհեթեթ: Ատիկա զիրին եղած էր իրեն. մէկուն՝ «Լրագիրը լմնցնես նէ ինձի տուր» ըսելով, միւսին հեռագիրը հարցնելով, որիչի մը «բոսթային եկած կամ չեկած ըլլալը», անդիինն եւրոպական լրագրէ բան մը թարգմանել տալով խօսքի բռնած, յարաբերութեան մտած, հրաիրտ մը նստիլ, սուրճ մը անել, սկսած էր բացատրել, խօսիլ օրուան դէպքերուն վրայ, ասանկով նոր ծանօթներ վաստակած քանի մը օրուան մէջ: Անգործ մարդեր ամենքն ալ, որոնք աւելի չէին խնդրեր քան խօսիլ ու մտիկ բնել, որոնց արեւնապատուութիւնը կը փայփայուէր Մարտիկ աղային պէս մեծ վաճառականի մը հետ յարաբերութեան մէջ տեսնալով ինքզինքնին, մանաւանդ որ միշտակ կերպով ալ գոհ չէին իրենց սուրճերուն ձրիութենէն, շնորհիւ Պոլսեցի վաճառականին առատաձեռնութեանը:

Տերրորին վախէն բոլորովին ազատագրուած — քանի որ Դրօշակեաններուն բարեկամ — խօսքի ու գործքի ազատութիւնը վերադարձ, ազգային բարեբորի երազէն շրջած, հլու ունկնդիրներու զարպտէ մը շրջապատուած՝ Մարտիկ աղա հիմա իր շուրին մէջ կը լողար, իր տարրին մէջ կը շարժէր, կը ճառագայթէր, կը տիրապետէր, իր անսպառ պերճաբանութեան սահանքները լայն բացած, առտուրնէ մինչեւ իրիկուն կը խօսէր ու կը խօսէր, գրեթէ ամէն բանի վրայ, արհամարհատ ատելութեան պոթիլումներով ծածկելով Հնչակեանները, ու զովեւոր գափնիներով Դրօշակեանները, քաղաքականութիւն գասախօսելով, օրուան հեռագիրները մեկնելով, Ալեքսանդրիոյ թաղականներուն վարմունքը քննադատելով, եւ մօտալուտ հրաշքներ խոստանալով յանուն Դաշնակցական կուսակցութեան որուն էն գործօն բրտրակաւտխաղը կը զանար քաղքին մէջ:

Իր փաստակալով պատկառագոյն մարմինին վրայ երեւրացող խոշոր ճառագայթող դէմքովը, աշխոյժ շարժականութեամբը, շեշտուած առատ ու բուռն խօսուածքովը, տիրապետական անտարակոյս շեշտովը, Մարտիկ աղա

միշտակ ազգեցութիւն մը չէր գործեր իր ունկնդիրներուն վրայ, գործնք արդէն տեսակ մը զարմացական յարգանքով կը նախապաշարէր ատ նորօրինակ երեւոյթը՝ յեղափոխութեան յարած վաճառականի մը:

— Դրօշակը կարգացի՞ք, կը հարցնէր ամէն նոր եկողի... ա՛ն կարգա... նայէ՛ մարդիկը ի՞նչ հիանալի բաներ գրեր են...

Ու յեղափոխական ու բարոյական բոլոր առաքինութիւններով հիւսուած շքեղ պատուածան մը կը հաղցնէր Դրօշակեաններուն, հերոսութեան գափնիպաւ կը զնէր անոնց զլուսն, ու ձեռուրնին կուտար Հայ ազգին ազատութեան զրօշակը, մօտալուտ ապագայի մը մէջ ծածանելիք՝ Մայր—Հայաստանին բարձունքներուն վրայ:

— Ռուսը, ան շունչանորդի Ռուսը, ան է որ կրեալի խնդիրը յարուց... որպէս զի...

Կ'անցնէր քաղաքականութեան, ուր այնքան զօրաւոր էր: Ատոր ապացոյցը սա է որ իր ունկնդիրները՝ բոլորովին տղետ այդ կողմէն, իրեն հետ տեսնուելուն ի վեր բիշ շատ կը հասկնային ու կը խօսէին այդ ճիւղը: Քաղաքականութեան այբուբէնը հեղել չզիտցողը իսկ՝ Մարտիկ աղա կարող էր շուտով զարգացնել. բոլոր զիւնանազիտական գաղտնիքներուն կը ծանօթացնէր, քաղաքական դէպքերուն թաղուն զսպանակները, ստորերկրեայ անչութիւնները մատով շոշափել կուտար, անցեալ պատահարներուն վրայ կը տեսարանէր, ներկաներուն կը բերէր կը կապէր դասոնք, կը մեկնէր, ու ասչափով չգոհանալով, անկասկած ապահովութեամբ, անվերակոյ վճռականութեամբ քաղաքական ապագան կը գուշակէր, գալիք պատմութիւնը լայն գրուագներով կը նախագէժէր, կը ցուցնէր գէպքերը, կնճիւնները որոնք պիտի ծնին, պատերազմները որոնք պայթին, փոփոխութիւնները որոնք Ազգերու քարտէսները յեղափոխեն:

Տեսնալու էր ի՞նչպէս կը պարզէր, կը լուսաւորէր զիւնանազիտութիւնը, այնքան կնճատ ու զժուար բան — կ'ըսեն — որ իրմով զբաղողները տարիքէն առաջ ճաղատ կը դարձնէ, մտմտացնելէն, ու կը յանձնուի — կ'ըսեն — էն խորամանկ թափանցող մարդերուն, այսինքն անոնց որոնց միաբը ծուռ է, քովէն, տակէն, մէջտեղէն, շեղ ու շիւ միտք մը որ ապիկար մնալու է ուղիղ գիծով պարագաներուն առջեւ: Մարտիկ աղա զայն կը դարձնէր կ'ընէր բաց գիրք մը զոր բարձրաձայն կը կարգար ամէնուն, անոր բազմակնճիւ կարժը կը վերածէր մէկ քանի շատ սրոշ թելերու, որոնց միջոցաւ, իրբեւ Արիւսի թելերու, «ամենայն» ապահովութեամբ կրնայիր քալել, առաջնորդել ինքզինքը քաղաքականութեան լաբիրինթոսին մէջէն, հրաշափոխուած այսպէս, Մարտիկ աղային շնորհիւ, պարզ պզտիկ տունի մը, բաց պատուհաններով ու մէկ դուռով:

— Անպատճառ թիրբը բան մը պիտի ընէ... Սերպիոյ եւ Պուլկարիոյ միջեւ կոխը անխուսափելի է: Ռուսը զիտմամբ մշտեց Ֆրանսան... դուն հսն դնա՛ ըսաւ... ա՛խ, շունչանորդի Ռուսը:

Իր պարզող երեւակայութեամբ, Մարտիկ աղա, ինչպէս արդէն ամէն Հայերը որոնք քաղաքականութիւն կը խօսին, Պետութիւնները անհատներ կը տեսնար, Ռուսը, Թիւրքը, Անգլիացին, Գերմանացին, զոր ուղածին պէս կը խաղցնէր խամածիկներու պէս որոնց շարժաթիւր իր ձեռքը ըլլար, կը պատկերացնէր քեզի մեծ կամ փոքր պետութիւնները ընտանի, ռամիկ գործողութեան մը բուր շարժումներով, զիրքերով — աչքի խորամանկ քթթումներով, ազգարարող նշաններով, արմուկի մտերմական հարուածներով, Կիրակոսին ու Մարկոսին մէջ փոխանակուելիք խօսքերով ու շեշտերով:

— Ռուսը Գերմանիոյ նշան ըրաւ, զուն առաջ անցիր, ըսաւ... ես... Պրանսային ալ խաբեց որ...

Մարտիկ աղա ամէն բան կը բերէր Ռուսիոյ կը կապէր, զոր ամենագոր կը հաւատար: Ան էր զլիաւոր զըսպանակը դիւանագիտական մեքենային. ան գերագոյն վարողը քաղաքական կառքին, երկիրներու վրայէն:

— Ռուսը, Ռուսը, Ռուսը...

Քաղաքական ամէն դէպքի տակ, Մարտիկ աղա Ռուսին մատը կը փնտռէր ու կը դտնար հոս հոն, ամէն տեղ, տիեզերքին ամէն կէտերուն վրայ, Թիւրքիա ինչպէս ծայրագոյն Արեւելք, Եւրոպա ինչպէս Ափրիկէ. ո՛ր որ կ'ուզէր, ան ամենագոր է, միշտ ներկայ է, միշտ կը հսկէ: Ան է որ կը զրգոէ, կը զրգէ, կը նիւթէ ամէն տեղ, իրարու կը ձգէ տէրութիւնները, Կրիտացիները կը զրգոէ Տաճկին դէմ, Տաճիկը Յոյնին դէմ, մէկ կողմէն Տաճիկին խորհուրդ կուտայ դիմադրել, միւս կողմէն Յոյնին յոյս կուտայ, Պրանսան եւ Անգլիան կը մղէ Կրետէի խնդրին կարգադրութիւնը պահանջելու, Հնդկները կը հանէ Անգլիացիին դէմ, Անգլիացին կը մշտէ...

— Եւրոպայի Ռուսը, շէշտ Ռուսը, վերջացուց Մարտիկ աղա... ամէն բան անոր ձեռքով կ'ըլլայ:

— Ինձի հարցնես նէ, էֆէնտի, Անգլիան է ամէն բանին պատճառը, յարեց յանկարծ՝ Մարտիկ աղան ունկընդորդ լուծեանը մէջէն՝ քիչ մը թօհաֆ ձայն մը, պտուարակելի, հազիւ ուրուագծուած շրթունքի թոյլ, սահուն լարտուածով մը արտասանուած կլորիկ պարարտ ձայն մը որ բաղաձայն, անհարթ վանկերուն սոսկորները, անկիւնները կը պակսէին, կարծես հալած կակուցած, ե որ բառերուն վերջին զրբըր կ'ուտէր, օգին մէջ կը ձգէր առկախ: Խօսողն է Եւրոպայի Գարակէօզեան, կլոր դէմք մը, արարագոյն, այրած կամարածե թաւ յոնքեր, աղեղի կորուծեամբ կակա քիթ մը, աղտոտած ճերմակով սեւ աչքեր, վաւառա շրթունքով խոշոր բերնի մը վրայ կարծես փրփրոտ պեղեր: Ամբողջ երեսը, թէեւ պղտիկ, խոշորնալու, պոթկալու, ընդլայնուելու տենչով ուռած կարծես. զուլըր միշտ առաջ, այտերը փքուողոյց, բերանը բաց, կարծես խօսելու միշտ պատրաստ գտնուելու համար. « ալապոս » սանտրուած մազերը ճակտին վերելը ցցուած՝ յաղթական ու խիտ: Պոլիս պատուելի Վոսփորի գիւղերէն մէկուն մէջ, խիտ ուսումնական — իր իսկ կարծիքով, — միշտ իր վրայ խօսող, իր անցեալ փառքին, իր նախկին

աշակերտներուն, իր ուսմունքին, Պոլիս վաստիւած դրամին, վարած կեանքին, բարեկամներու համար ըրած ծախքերուն վրայ — բոլոր ասոնք հակապատկերելու համար իր այսօրուան խեղճ վիճակին — մարդ ճանչնալու, « մեծ մարդերու » հետ տեսնուելու, ուշադրութիւն զրուելու, իր ուսումնականութիւնը ամէնուն աչքը խօթելու մարմալէն բռնուած մէկը: Եւրոպայի հետադիրներուն առջեւ կը կենար, զանոնք գոց ընելու ու իրիկունը, եկեղեցին, գաղթականներուն բարձրաձայն թարգմանելու համար, մունետիկի մը պէս. որճարանին մէջ, մէկ ծայրէն միւսը կը պոռար, ամէնէն լսուելու կերպով. « Միւսիւ, լմնցնես նէ թանը ինձի տուր կամ Սքանտարտը: »

Փողոցը քալած ատեն՝ աչքը բոլորակի կը պատցնէր ծանօթ մը չփախցնելու ու բարեւէ չգրկելու համար ինքզինքը. հանդիպած ամէն կարգի մարդուն կը կառչէր, անդպայ իրեն դէմ ցուցուած պաղ ու վանող վարմունքին, հոգ չընելով կամ չնշմարելով թշնամական լուծիւնը կամ ծաղրերը որով իր խօսքերը կ'ընդունուէին, Հայերու ամէն խմբաւորումի, ծանօթ, անծանօթ, անգամ մը միայն տեղ մը տեսած մարդերուն անպատկառօքն կը մօտենար, խօսակցութեան կը մտնար, իր վրայ խօսելու, անցեալի կամ ներկայ տեղեկութիւններ տալու համար հաճոյակատարօքն, մանաւանդ ատենէ մը ի վեր որ Աղեքսանդրիոյ ազգային երկսեռ վարժարանին մէջ դասատու ըլլալէ յուսարեկ — հակառակ իր շատ խոնարհ, սակաւպետ առաջարկութիւններուն — նպարավաճառ եղած էր: Ինքզինքը արդարացնելու պէտքէ մը բռնուած՝ իր նախկին արհեստին ու հիմակուանին հակասութեան իր վրայ ցայտելիք ամօթը խօթափել ուզելով իր վրայէն, փողոցը՝ հանդիպողը կը կեցնէր, չհարցուած տեղեկութիւններ կուտար, երկար բարակ:

— Բարեւ, պատուելի, ինչպէս ես...

— Է՛հ, փառք Աստուծոյ, մը կը սկսէր Գարակէօզեան ու վերջը չէր բերեր: Է՛հ, իշտէ ինչ ընենք... մենք ալ նպարավաճառի խանութ բացինք... փառք Աստուծոյ, կ'ապրինք կոր, օրական 5-6 Քրանք կը հանենք կոր... պիտեմ, մենք նպարավաճառ ըլլալու մարդ չէինք, բայց ինչ ընենք... ճակատագիրը ասանկ ուզեց... մեր ազգը ապերախտ է... իր մշակները վարձատրել չի գիտեր. 15 տարի հայ մանկատան դաստիարակութեանը նուիրեցի ինքզինքս... Հիտարի մէջ փայլուն կացութիւն մը ունէի... 10-12 սոկի կը վաստիկէի. ամէն կերպով հանգիստ էի... այսօր ալ ստիպուած եմ նպարավաճառութիւն ընել... ասոր ալ վերջը կուգայ հարկաւ... ես խոնարհ մարդ եմ... փրիխոփայ եմ ես... հասարակաց կարծիքը հոգս չէ. Դիոգենէսի պէս մարդ մը տակառի մէջ կը բնակէր: Արդէն շատ գործ չունիմ. խանութը բնկերոջս կը ձգեմ ու ես օրը 5-6 ժամ սրճարանները կը պատիմ, Թաւ, Պիկառ, Տեպա, Թայնգ, Սքանտարտ կը կարգամ... փառք Աստուծոյ... հարկաւ Պոլսոյ վիճակի ձեռք պիտի ձգեմ:

Ու կը սկսէր Պոլսոյ վիճակին վրայ խօսիլ, ձեռքի ու իրանի թոյլ, լիլիսած, կարծես սխալած շարժումներով,

շիտթ՝ խառնակ լեզուի մը մէջ, բառերը՝ փնտռելով, բա-
ցատրութիւններուն մէջ մոլորելով, Ֆրագներուն մէջէն
չկրնալով ելլել, խառնափնդոր տակնուլրայութիւն մը,
բանթովիմեան իրարանցում մը հաշմանդամ բառերու,
կաղ, կտրտուած, չաւարտած նախադասութիւններու, վի-
ժող՝ շուտ ըմբոսնելու արտորանքի մը մէջ որ յաճախ ետ
կը մղէր, կուլ տալ կուտար զանոնք կամ մէկէն դուրս կը
նետար, կամ առկախ կը ձգէր իր խօսքը՝ մէկ ոսքը դրան
սեմէն ներս ու միւսը դուրս մէկու մը պէս:

Պարագուրդի ժամերուն Մարտիկ աղային ունկնդիր-
ներէն էր, թէեւ շատ հաճելի չէր այս վերջինին իր վիճա-
մու, կուտազան յաւակնութիւններուն համար: Աքաղաղ
աքաղաղի դէմ, կը փորձէր միշտ հերքել Մարտիկ աղա-
յին խորհրդածութիւնները:

—Ապուշին մէկն է, կը յայտարարէր Մարտիկ աղա,
անոր մեկնելէն վերջը՝ իր քով գտնուողներուն:

(Շարունակելի)

ՊԱՐՈՅՐ

ՕՐՈՒԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Անուրանալի է որ թիւրքիոյ Է-ն, հետեւաբար մեր—
ճակատագրին հետ առնչութիւն ունեցող խնդիրներուն ա-
ռաջինը հիմակ Մակեդոնիոյ խնդիրն է: Յառաջիկայ գար-
նան այդ կողմէն դժուարութիւններ պիտի ծագին — ահա
լուրը որ չորս հինգ ամիսէ ի վեր բիրապատիկ ու յաճախ
հակասական ձեւերու տակ երոպական մամուլին սինակ-
ները կը լեցնէ: Սկեպտիկներ կան որ, անայլայլ, կը յայ-
տարարեն թէ ասիկա ա՛լ քիչէ մըն է որ ամէն ձմեռ պար-
բերաբար երեւան կուգայ եւ որ գարնան ձիւններուն հետ
կը հալի կ'անհետի, տարի մը վերջը նորէն երեւան գա-
լու համար: Ուսերնին թոթուելով, դիտել կուտան որ ահա
բաւական տարի է որ այդ մակեդոնական ապստամբու-
թիւնը գարնան անպատճառ պիտի պայթի, ու սակայն օ-
չօչուկները կը փթթին ու լոխ կը խամրին ամէն գարնան՝
Պալքաններու կողերուն վրայ ու ծմակներուն մէջ, առանց
կոխկրտուելու ապստամբներուն լաւ սպառազինուած յոգ-
նախուռն հրոսներէն: Ու, ժպտելով, կ'աւելցնեն թէ առա-
ջուց շատ զրուցուած ապստամբութիւնները ընդհանրապէս
ամէնէն երկիւղալիները չեն:

Հեռու չէ սակայն ժամանակը որ պիտի գայ հերքում
մը կ'սմ հաստատում մը տալ այս ամէնուն: Մինչեւ այն
ատեն, կարելի չէ որոշ դատաստան մը կազմել ամէն կող-
մէ տեղացող տեղեկութիւններուն վրայ: Ռուսիա ինչ դիրք
պիտի բռնէ եթէ իրօք խոսովութիւններ ծագին, Աւստրիա
ինչ պիտի ընէ, ինչ պիտի ընեն Պուլկարիա, Սերպիա եւ
Գարատաղ, ահա հարցեր որոնց պատասխանը հարիւր
անգամ տրուեցաւ ամէնէն հակասական կերպով:

Իրողութիւնը սա է որ թիւրքիա հետզհետէ իր զին-
ուորական պատրաստութիւնները շատցնելու վրայ է այդ
կողմերը, ու վերջին լուրը այն է թէ 73,000 զօրք հա-
մախմբած է Մակեդոնիա: Միւս կողմէ պէտք եղած հրա-
հանգները տուած է Ալպանիոյ խալաֆներուն, որոնք հան-
դիսաւոր ժողովի մը մէջ հաւատարմութիւն եւ աջակցու-
թիւն երզուընցան սուլթանին: Հայաստանի տոսմը Մա-
կեդոնիոյ մէջ ալ կրկնելու բոլոր միջոցները հիմակուց
ձեռք առնուած են: Խոնդիր է միայն թէ նոյն յաջողու-
թեամբ պիտի աւարտին:

Նորագոյն լուրերն են. — Կ. Պոլսոյ Ռուսիոյ դեսպա-
նը սուլթանին ուշադրութիւնը հրաւիրել է Ալպանիացիներ-
ուն սպանական զիրքին վրայ որ վտանգի կ'ենթարկէ
Մակեդոնիոյ խաղաղութիւնը, եւ խորհուրդ տուել է ա-
մէն միջոցներով առաջը առնել խոսովութեանց, եւ յան-
ցաւորները պատժել: Թիւրքերը կը շարունակեն զօրք զըր-
կել Մակեդոնիա:

Միլլոյիցայի մէջ Ալպանիացիներու եւ քրիստոնեա-
ներու միջեւ պատիկ ընդհարում մը տեղի ունեցած է,
որու միջոցին քրիստոնեաներէն մին սպաննուած եւ մար-
մինը կտոր կտոր եղած է: Ասոր վրայ քրիստոնեաները
(Սերպեր) Բրիչլինա փախած են, եւ զայմազամը իսկիւ-
պէն հեռագրով զօրք խնդրած է: Զարմանալի է որ զայ-
մազամը պաշտօնանկ եղած է, եւ անոր տեղ Ալպանիացի
մը անուանուած: Քրիստոնեաներուն մէջ մեծ սաքսափ կը
տիրէ:

Թիւրքիոյ մէջ պատահած բոլոր մեծ առկնուլրայաթ-
թիւնները միշտ այսպիսի փոքր գէպքերէ կը սկսին:

Լ. ՉԱՐԹՈՒՄԵԱՆ

ՀԱՍՑԷ ՈՒ ԲԱԺՆԵՊԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին
դրկել առ

L. FRANK,
309, LADBROKE GROVE,
(ENGLAND). LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին
եւ 1 ճին: Բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10
եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2
ու վեցամսեայ 1 տոլար: